

# ՍՈՓԵՐՔ

# ՀԱՅԿԱԿԱՆՔ

# ԺԳ.

ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ

9(47.925)

# ՈՂԲՔ
# ՎԱՍՆ ԶԱՐԵԱՑՆ
# ԱՇԽԱՐՀԻՍ ՀԱՅՈՑ

ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՑՆ

## ՎԱՀԱՆԱՅ ԳՈՂԹՆԱՑՒՈՅ

Ի ՎԵՆԵՏԻԿ

ի Տպարանի Մխիթարեանց

ՌՅԳ — 1854

ՍՏՈՒ...
19..2 Թ.

ԱՐՁԱԿԵՑԷՔ ՈՐ ՏԵՍԱՆԵՄ
ԶՈՐՁԱՓՈՒԹԻՒՆ ԱՒԵՐԱԾՈՑ
ԵՐԿՐԻՆ ԻՄՈՅ ՀԱՅՐԵՆԵԱՑ.

ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆ.

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ և ԳՐԱԿԱՆ. ԻՆՍՏ.
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-та Истории и Литературы
18133
4976

# ԱԶԴ.

Անցեալք ընդ յոլովս և ընդ պէս-
պէս պատմութիւնս որքոց արանց
և քաղաքական դիպաց Հայաստանի
աշխարհիս , յաւէտ սխրանօք գե-
ցոյք և գեղեցկացոյք 'ի վիպասա-
ութիւնս յայս՝ որքոյն ՎԱՀԱՆԱՑ
ՈՂԹՆԱՑԻՈՑ . զի հուրն հայկական՝
ախանձ սեփական հայրենեաց , որ
յանձին տաչորի նախ քան թէ
յայլսն ճառակեալ , հուր անախտ ,
ան զոր չէք ինչ վէհ և դրոշմեալ
երկրի և անդր քան զերկիր 'ի
ն բացափայլեալ տեսանի . ս
տաստիկ , հզօր և հանդարտ , պայ-
ու և մղձկուս , սրտահեշտ և սըր-
տկէզ : Ոգի նուրբ և սիրտ ճա-
ժգ .

պուկ տքնեալ յերկար ամօք յօթեվանս միայնութեանց, արուեստապետեալ հայեցի ձեռին ճարտարութեամբ, 'ի ժամու անդ վերահաս վտանգաց ընտանի տոհմին և տեղւոյ, արձանացոյց զայս դրուագ սրտառուչ՝ յաւերժ յիշատակ՝ նահատակին մեծոգւոյ և սիրողաց նորին: — Ո՜վ սիրտ ողջախոհ, որ զգաստ լինձ այժմ՝ զհուրն զայն՝ որ զօղելով զօղի և ոչ խապառնուազի, և յետ հազարաց և հարիւրոց ամաց կրես ճշմարտիւ զսէր և զսուգ ընդ անցեալքն և ընդ այժմու դէպս դըժընդակս քո սեփական գրոհիդ, սիրտ ընտրեալ, որում ուսոյց բնութիւն, կամ այն որ տէրն է բնութեան՝ զի՞նչ այն սէրն և սուգն իցէ, զոր ոչ աշխարհիս շռայլութիւն, ոչ գանձք շահուց, և ոչ իսկ աւագութիւնք և սրբութիւնք բարձից և աստիճանաց կարեն ազդել

յորժս զբաղեալս կամ օտարա-
պաշտս և կողմնատարս, որք ոչն
արդարացին և 'ի լեզուածայր խոս-
տովանութեանց հայրենասիրութե-
կամ 'ի վարկպարազի գրուածոց
ինչ իւրեանց. Հայկազնդ դու ող-
ջախոհ, ա՛ռ ընթերցիր զայս վէպ
գողթան տեառն, և ընթերցիր
ստէպ. և ապա ձեռն յոգի հա-
րեալ փութացիս, եթէ հնար է՝
և չգուցէ այլ հնար, յարուցանել
“զդիւրաշարժն առ խանդաղա-
„տանս” զԵրեմիաս, արբանեկօք
նորին, գոյժ գերարտօր աշխարա-
նի արկանելով նմա՝ թողուլ լքա-
նել այսուհետև զհինն Իսրայէլ,
զի վաղ ուրեմն “ընդ գերեզմանա-
„կան վայրօք փակեցաւ նա”, և
ձեպել գալ առ նորս՝ 'ի Հայս, որ
դեռ ես առ տապանաւն դանդա-
չէ. ասա նմա “արտասուօք բազ-
„մաց մի հոգար՝ որ զաչս աղբեւրս

» խնդրէիր , զի 'ի մեր աշխարհս ծո-
» վացեալ արտասուացն աղբերք »:
Եւ զայս արարեալ քո կեղեքեալ
որտից ափոփանս , կամ երկայնա-
մտես և ակն կալնուս յուսոյն արե-
գական' որ դառնայ զհետ անձրե-
ւաց արտասուաց , կամ թէ կար-
ծամեալ փախիցես դէմ երեսացդ'
ուր Երեմիայն գնաց , ուր Վահան
գնաց , ուր պատմագրող վարուցս
և Նմանիքն գնացին . և 'ի դառն ու
քաղցր յեղանակս հառաչանացդ'
յիշեսցես և զղուդակիրան քո , և որ
զվարս զայսոսիկ հանին քեզ 'ի լոյս'
'ի սոյդ յերկաթագիր մատենից
քոյոց նախնեաց :

ՈՂԲՔ ՎԱՍՆ ՉԱՐԵԱՑՆ

ՈՐ ԱՆՑԻՆ Ի ՎԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՍ

ՀԱՅՈՑ

Ի ՃԾԲ ԹՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ

ՀՐԿԻԶՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԳԵՐՈՒԹԵԱՄ

Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱԶԳԻՆ ԻՍՄԱՅԵԼԻ

ԸՆԴ ՈՐՈՒՄ ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՍՐԲՈՅՆ ՎԱՀԱՆԱՅ

ՈՐ ԷՐ ՈՐԴԻ Ս. ԽՈՍՐՈՎՈՒ Ի

ԳՈՂԹԵԱՆ ՏԵԱՌՆ.

ԵՒ ՅԵՏ ԼԳ ԱՄԻ ԳԵՐՈՒԹԵԱՆՆ

ՀԱՅՈՑ ԿԱՏԱՐԵՑԱՒ ՍՈՒՐԲՆ ՎԱՀԱՆ

Ի ԹՈՒԱԿԱՆԻՆ ՃՁԵ

Ա. ԱՀԱ մերկացաւ սուրն վա-
զկանը 'ի պատենիցն, զոր տեսա-
նող ականքն յառաջագոյն սպառ-
նացեալ ողբայր մարգարէն: Սուր
ծարաւի արեան՝ զարթեալ 'ի մեզ
ազգն Իսմայելի, ընդ չորեսեան կող-
մանս երկրի գոչեալ առեւծաբար.
կամ իբրեւ չորեքին հողմովք բա-
խելով զծով, զաշխարհս մեծու-
թիւնս: Որ արդեւք թէ և առ խա-
ւարեալ լինէր մարգարէութիւնն,
զայն և առ մերս առնու ձայնն. մա-
նաւանդ Երուսաղէմ մինչեւ 'ի
հիմն քակեալ լինէր, և մեր՝ բոլոր
աշխարհս քակեալ աւերեցաւ:
Զվայելչութիւն երկրիս՝ օտարազ-
գիք կալան. և ազատութիւն և տէ-
րութիւն և իշխանութիւն նախարա-
րացն՝ անարգութեամբ յերկիր կոր-
ծանեցաւ: Ընդ մանկունք տղայք

զքարի հարեալք . և մերքս՝ առ
հասարակ ծնողք և մանկունք՝ 'ի
գերութիւն . որ և զմարցն 2 առեալ
ողբայր Երեմիա , այն և մեզ իսկ
դիպեցան 'ի դէպ ելանել:

Արդ որ եսդ մեծ և դժուրաշարժ
առ խանդաղատանս , որ մինչեւ
տեղծեալ յորովայնի՝ Աստուծոյ
էիր ծանօթ , և յառաջ եկեալ սըր-
բեցար Ճշմարիտ օրինօք մերոյն
Քրիստոսի . որ 'ի պահու ողջախո-
հութեանն զՀոգին սուրբ 'ի քեզ
կոչեցեր , և սաՃար նմա եղեալ՝
մարգարէանայիր , որպէս և սուրբն
Ամբակում . արդ որպէս յայնժամ,
նոյնպէս և այժմ մեզ՝ Ճանապարհ-
քըն Սիովնի սգան . զի ապակա-
նեալ բարձաւ լոյս պայծառազար-
դութեան սուրբ սպասուց և զար-
դուց եկեղեցեաց . ուրախութիւն
հոգեզարդ տօնից և ցնծութիւն
աստուածային հոգեւորական եր-
գոց , քահանայից և պաշտօնէից . և
միանգամայն իսկ առ հասարակ
վայելչութիւն աշխարհիս : Վասն
զի մրրիկ տապախառնի տխրաբեր

նչեալ օդոյն հարաւոյ, բարձ զա-
ադաստն փափկութեան. բար-
եալ զպատուականութիւն և զօր-
ութիւն լուսազարդափայլ ծած-
ութեան, որ փոխանակ դրախտին
որհեցաւ մեզ, 'ի կենաց փայտէ
աչքին Քրիստոսի. և յայտնեցաւ
խութիւն Թանձրութեան կտա-
ոյն. խաւարազգած Թանձրու-
թիւն անհնարին սեւութեանս.
գոյն, որ ունելոց էր զամենայն աշ-
խարհս Հայաստան երկրիս: Որպէս
յառաջագոյն երեւեալ 'ի տեսլեան
երանելլի և մարգարէաշնորհ առնն
Աստուածոյ սրբոյն Սահակայ 3, յա-
ւէտ խնամող հոլովին բանաւոր
հօտի և վերադիտողի աշխարհիս
Հայոց. կամ որպէս յառաջագոյն
տեսեալ սքանչելի լուսաւորու-
թեամբ նորին նախնոյն՝ առաքելա-
նման առնն երից երջանիկ սրբոյն
Գրիգորի:

Բ. Ի ժամանակս բռնակալու-
թեան տաճկաց, զոր յետ մա-
հուանն առաջնոյ Մահմետի, յութ-

սուն և հինգ ամի իւրեանց , գը-
րեն 4 'ի մի ժամանակս 'ի վերակա-
ցութեան Աբդլմելքեայ որդւոյ
Մրուանայ , հուր 'ի մեզ վառեցին ,
սատանայի 'ի նոսա փչելով զբար-
կութիւնն . և սաստ բան տալով ,
անօրէն խորհուրդ առեալ 'ի մեզ ,
թունիւք մահաբեր չարութեամբ ,
յետ բազմաց եղելոց չարեաց . զի
զզօրս և զզօրագլուխս , զպետս և
զիշխանս , զազատատոհմս և զնա-
խարարազունս ընդ ջինջ կորստեամբ
բառնալով սրափողոտ խողխողմամբ
սպառեցին :

Այս փութով դեսպանս արձա-
կեցին 'ի կողմանս կողմանս , սաս-
տամբաւ փութով , գաւառական հա-
ւանեցուցանող բանիւք և խոստ-
մամբ , զամենեսին 'ի մի վայր գու-
մարելով . յարքունուստ բազում
ձիրք և պարգեւք նոցա շնորհեցին ,
առատաձեռն տրօք բաշխելով նո-
ցա դահեկանս , զտարուոյն ասայ-
անան 5 եւս . նենգապատիր խաբէ-
ութեամբ զպատենազէնսն 'ի նոցա-
նէ 'ի բաց առնուին , իբր թէ զին-

քեանս ամրայուցանել 'ի նոցանէ՝ յերկեւղէ սրոյն , թէ Դուք չէք որպէս զմեզ յերդումն հաստատուն : Եւ ածեալ զնոսա 'ի մի վայր՝ յերկուս տեղիս կացուցին պահեստիւ . զոմանս 'ի քաղաքն Նախճաւանայ , և զկէսն 'ի յաւանն Հրամի 6 : Եւ վերակացու ումն նոցունց չարադործաց , կասմ անուն , հաւատարիմ Մահմետի , էր հրամանատար Հայոց հրամանաւ Աբդլմէլքեայ :

Եւ ժողովեալ զնախարարս աշխարհիս 'ի նախասացեալ տեղիսն , 'ի սուրբ եկեղեցիսն արկանէին , և զդրունս վերջ առեալ փակէին , և ասէին , թէ Մի ոք ելցէ յայս մեծ խորհրդոյ արտաքս . և ինքեանք 'ի ծածուկ զինու վառեալք՝ իբր սրազգածք լինէին , 'ի դուրս դիմեալք , և նոցա աղխսով 'ի վեր կալեալ զելիցն վայրս : Իսկ նոցա ձայն առեալ զսուրբ մանկանցն որ 'ի հնոցին օրհնելով , և ապա զհրեշտակացն երգս ընդ հովիւսն փառաւորէին և զվերին զուարթնոցն : Եւ նոցա զվերնայարկսն քակեալ՝ լուցին հրով . և

քան զԲաբելոնին 'ի վեր բարձրացուցին այրեցական նխուժովքն : Ընդ բռնութեան թագաւորին երկեւղ, և աստ լեգէոն այսոց 'ի մարդիկ մտեալ՝ մոլեգնեցուցանելով, շուրջ ընթացուցանելով և զառուրան փայլեցուցանէին : Ընդ ապա հօր՝ որդեծնաց գութ աղխան այրէր · և 'ի վերուստ 'ի ձեղուանէն անկանէր կրակն , և մանկանցն 'ի հանդերձան վառէր հուրն · հարքն 'ի բաց կրաբէին , զի առ նոցա ողորմահութին՝ զնուրեանցն ոչ յիշէին · և զայդ այրէին առ հասարակ ամենեքեան :

Արդ ողբա՛ և զմերս սուրբդ Աստուծոյ , որ աւերիր · Մի առաջեր զիս առ ժողովուրդն · զի քոյդ ընդ գերեզմանական վայրօք փակեցաւ , և աչք քո աղբիւրանան արտասուօք վասն մեր : Բաց զբերան քո 'ի բարեխօսութիւն , զի զքո մեռելութիւնդ՝ պատուական արար Աստուած քան զմեր կենդանութիւն : Սո՛ւգ առ երկիր , ողբա երկին , յոգւոց հանէք առ հասարակ , ըղձիւ բարձէք ընդ մարգարէին · զի

աչա մեզ և մառախուղ 'ի ձեզ տարածեցաւ : Արտասուօք բազմօք մի հգար Երեմիա, որ զաչս աղբեւրս խնդրէիր · 'ի մեր աշխարհս իսկ ծոցաւ արտասուաց աղբեւրք :

Ըստ այնմ ամենայնի բազմավտանգաւոր հրոյն այնորիկ' 'ի նիւթական մարդկան ձեռաց բարձրացեալ, հրդեհակէզ եղեալ առաստաղակեալ փայտակերան այրեցեալ լինէր · հրկիզի մուրն 'ի վերուստ հոսեալ հանդերձ մոխրաւն հրոյն, հեղձամղձուկ դառն պատուհասիւ զվախճան մահու ածեալ 'ի վերայ նոցա ամենեցուն, ծածկեաց զբազմութիւնն զայն աննօնական 'ի վերուստ : Եւ նոցա անդադար գոհաբանութիւնն ընդ սպառեալ հոգւոյն' դադարեաց : Եւ դաշնանցն յապահովութիւն եղեւ յերկեւղէն, որ բազում անգամ վտանգարեալ լինէին 'ի նոցանէն բազումք' 'ի սակաւ քաջամարտիկ և պատուական նախարարացն · նոյնպէս և ամենայն երեւելի մարտիկ զօրացն սրով գլխատեալ

ԳԱՏՄՈՒԹՅԱՆ և ԳՐԱԿԱՆ. ԻՆՍՏ

զփայտէ կախեցան . և այնպէս գործն զրաւեցաւ :

Գ. . Եւ ապա սփռեցան վրիժագործք այլազգիքն ընդ աշխարհն , և քննեցին զտունս սպանելոցն . և նոքօք իսկ համօրէն զամենայն աշխարհէս զգանձս առեալ , զայն ամենայն , և զհեծելոց տունս առնլով և զընտանիս . այնր պատճառաւ առեալ ածէին 'ի Նախճաւան զառեալ գերութիւնն . և որոց համբաւն իսկ բեկեալ էին , և աշխարհն ողբոց էին սրտիւք , ածեալ ցուցանէին ողորմամահութի , զայն որ 'ի վերայ փայտիցն է . ահ առնելով ոչ միայն մերազգեացս , այլ տիեզերահամբաւս առնելով զիւրեանց քաջութիւնն :

Եւ լինէր այս չարութեան խորհուրդ 'ի վեշտասաներորդ ամի իշխանութեանն Աբդլմելքայ , որպէս չարեօք կործանեաց զերկիրս Հայոց , մինչեւ յօր մահուան իւրոյ . և չորեցս այս եւ 'ի գլուխ հրամանաւ նորա : Յետ մահուան նորուն , յա-

ընումն ամի իշխանութեանն վեթի որդւոյ նորա, որ էր Թուա-ին Հայոց հարեւր յիսուն և եր-ու, յաւուրս տօնի զատկին. ապա թեալ ածին զբազմութիւն գեր-յն 'ի մայրաքաղաքն 'ի Դուին. և կերիմ աւուրս զամենայն յարգե-նի պահելին. որպէս կարծեմ յո-վութիւն լինէր մեռելոցն քան թէ մնացեալ կենդանեացն. և յաշ-ան հասեալ ժամանակ, հանեալ նոսա յարգելատան տեղեացն, ըղ-պարանոյն կնքէին, և առեալ տալ անէին 8 զնոսա յԱսորեստանեաց երկիրն համարով և գրով: Եւ հա-սեալ 'ի Դամասկոս քաղաքն գունդն յարքունիս ունէին, և զմանկունս նոցա յարուեստս տային, և զայլն բաժանեցին զգերութիւնն: Իսկ մեռելոցն 'ի Ճանապարհի ոչ գի-տեմ, եթէ ընկալա՞ւ զնոսա գերեզ-ման, և եթէ ո՞րպէս ընկեցեալ ե-ղեն 'ի տեղիս:

Գ. Յայնմ վայրի 'ի ժողով ան-կելոցն գտանէր մանուկ մի 'ի Գող-

թըն գաւառէ Վահան անուն նորա, որդի Խոսրովայ Գողթեան տեառն, սակաւամենից իբրեւ չորից տարեաց, առաւելաչնորհ երեւեալ, հրամայեցաւ զնա յարքունուստ՝ 'ի մեր 'ի մեծ խորհրդոցս ճշմարտութենէ 'ի ստութիւն դարձուցանել ուրանալով զմեր ճշմարտութեանն զյոյսն : Եւ իբրեւ արարին զայն՝ կոչեցին զնա Վահապ . և երթայր և իմաստնանայր, և ամենայն խորհրդակցացն վերագոյն գտանէր, և իւր հասակակցացն վարդապետ, և դիւանադպիր արքունի : Եւ ապա յետ փոխելոյ ժամանակին Աբդլմելքայ և Վլիթի որդւոյ նորա, և Սուլիմանի եղբօր նորա, ընտանի էր զօրացս այս Տաճկաց, որ 'ի մեզ եղեւ ստութիւն :

Եւ իբրեւ նստաւ Ոմառ 'ի գլխաւորութիւն Տաճկաց, արկ 'ի սիրտ նորա Աստուած յիշել զանիրաւութիւնն որ առ Հայս . հրաման տայր ժողովել զգերեալսն մեծաւ սընդութեամբ . և 'ի ժողովելն՝ արձակեաց զամենեսեան : Եկն և Վա-

հանին այն որ անուանեցաւն Վա֊
հապ, և նոցա ուսմանցն և օրինացն
քաջ տեղեկացեալ էր, և խոսիւք
քաջ և կորովի, և ծանուցանէր զիւր
դժուարութիւնն: Եւ դժուարին
թուէին բանքն այն մեծին Սմառայ.
զի տեսանէր ոչ զոք նման նմա ի֊
մաստութեամբ. խնդրեաց վկայս,
և չկամէր թէ ոք վկայեսցէ զնմա֊
նէ. և որք 'ի Հայոց եկին վկայք`
ոչ ընկալաւ: Այս պնդութիւն
վասն պիտանութեան առնն եղեւ.
բայց զիւր հրամանն հաստատուն
պահէր. 'ի բարւոյական բնութեան
իւր զոր ունէր, և ոչ փոփոխէր:

Այս դեսպանս ձիով արձակէր
առ քննող գրոցն 'ի Միջագետս, և
բազում խնդրոյ պնդութեանն, որ
թէ Աստուծոյ տեսչութիւնն ոչ հե֊
ռի արգել լինէր: Եւ անդ գտանէին
արք տասն և հինգ Տաճիկք, որ ըստ
ժամանակին քաջ տեղեակք էին և
երանելի մանկանն ծանօթք. և զայս
ամենայն զրոյցս առ Սմառ հասու֊
ցանէին վկայութեան: Իսկ Սմառ
տեսեալ զժամանակն` ոչ կամե֊

ցաւ բռնութեամբ առնել. այլ յօղոք անկեալ ընդ պատմանեկին հեշտալի բանիւք, եթէ Մի թողուր ըզմեզ որդեակ. և եթէ պակասութիւն ինչ կարծես զքո կենացդ, երեւելի թագաւորութեանց իմում առնեմ զքեզ, փառաւոր իշխանութեամբ և գանձիւք: Եւ այն որ աստուածային եռայր հոգւով, ոչ ինչ մարմնական ցանկութիւն խոցէր զնա 'ի խորինս հայելով. այլ իմաստնանայր 'ի պատասխանին, եթէ Հարց իմոց որ Պարսից իշխանութեան երթալոյ, և Նիզակի և աղեղան վաստակք, յոլով գանձիւք մեծացան քան զբազում ազգս որ յերկրին իմում էին. արդ եթէ ամենայն առ իս կրկնապատիկ դառնայր, իմ գերութիւնս որ 'ի ձեր քաջութեան էր, և սիրեցէք զիս, և այլ խոստանայք մեծութիւնս, սակայն և այսմ ոչ կարէ հասանել տեղեաց: Արդ որպէս քաղցրացոյց Աստուած զձեր գութդ առ իս ողորմութեամբ, արձակեցէք որ տեսանեմ զորչափութիւն աւերածոյ

երկրին խմոյ հայրենեաց. և ձեր հրամանաւ գործակալ արարեալ՝ առ ձեզ հասանեմ։

Ե. Եւ յետ իմաստութեան բանիցն այն՝ լուծեալ լինէր պնդութիւնն. գրեալ հրամանաւ հաստատուն և անփոփոխելի իրօք։ Նա հասանէր 'ի գաւառն իւր Գողթն, և կարգաւորութիւն վերակացուացն ըստ հրամանին։ Բայց որպէս մեզ թուեցաւ նմանութիւն իրացն, Ճառագայթ որ առ միմեան էին լուսոյ հաւատոյն, որ արդեօք եթէ խնդրեաց յԱստուծոյ զերծանել 'ի նոցանէ։ Վասն զի սակայ լուր առ նա հասանէր, եթէ մեռաւ Ոմառ։ Եւ նորա ոչ կամեցեալ երթալ ըստ ամուր հրամանի և իւր հեշտութեանն որ 'ի Տաճկաստանի, ողբայր զայն վերջդարձութիւն 'ի տխս ողայութեանն. և վերստին աւաղան զարտասուսն առնէր, զոր յիւր մտացն 'ի խորութեան սրտի այնպիսի յարմարեալ.

Արդ քո Հայր սուրբ, որ քո

բարձրութեամբդ 'ի մեր խոնարհութենէս չես հեռի, և զքո Միածինդ մեզ պարգևեցեր սեղանով խաչին, և զհոգիդ քո սուրբ առաջնորդել հաւատացելոց քոց յերկիր ուղիղ. արդ հայեաց յիս 'ի բեկեալս սրտիւ. զի դու միայն տէր ես, և գթութիւն քո ոչ երբէք փակի ընդ սահմանօք. և եթէ մեռանելս մեր հաճոյ է քեզ, և զայն ոչ երբէք վերջացուք 'ի քո սիրոյդ, և չլինէր համար քո բարերարութեանդ:

Եւ իբրև տեսին իւրաքանչիւր ձայն ամենայն, զաներկրասէր. մտացն զբարս, կամեցան զնա ընդ աշխարհիս սիրով կապել, բռնադատէին զնա յամուսնութիւն, զի մի առժամայն գնասցէ պակասելով ազգին. և իւրեանց կամացն 'ի գլուխ ելեալ, արարին յազգականութենէ Սիւնեաց տեառնն: Բայց նա յիւրմէն ոչ փոխեցաւ յաստուածսիրութենէն, զի մի ըմբռնեսցեն զնա աշխարհիս մեծութիւնք. և 'ի ծածուկ կացցէ աս-

տուածպաշտութեամբ․ այլ յայտնապէս խոստովանեսցի զՔրիստոս, և մի ուրացօրէն երկեւղիւ կեալ։ Այս յանցաւոր կենցաղականացս զմիտս 'ի վեր ամբարձեալ, թողուլ զեւր զամենայն մեծութիւն, առեալ ընդ իւր թոշակ և հեծեալ քաւան, և դէմ եդեալ գնայր յաշխարհն Յունաց։ Եւ իբրեւ դառնայր 'ի Վայոց ձորոյ, զեւր ծածուկն յայտնի առնէր աներոյն․ օգնական խրատու ունէր զնոսա իւր առաջարկութեան Ճանապարհին։ Ընդ այս տիրաշարժ9 կանացն զողբս մտացն արտասուօք ցուցանէին, ասելով թէ Իշխանութեամբ առեալ զհայրենիս, մեծ յոյս և մեզ լինէիր․ արդ զայդ տեսեալ խորհուրդ՝ տարանամք․ և դու մեզ ոչ կենդանի լինիս և ոչ մեռեալ։ Իբրեւ շուրջ նստեալ արտասուօք յողոք անկեալ ասէին․ Հայեաց 'ի մեզ յանհնարութիւն կենացս․ դուցէ դու 'ի մէնջ խընդրեսցիս․ ընդ քեզ գամք 'ի կեալ և 'ի մեռանել յօտար երկիրն․ քեզ

ողբակցեալ անկցուք անցամաքելի արտասուօք ։

Իբրեւ զայն լսէր Երանելին, ողբայր զպատատաղաւոր իրան եւ զանկնելն, եւ զԹոշակին ծախումն. եւ յանդէպս վառեալ իբրեւ Հոգւոյն զինու, վաղվաղակի հատանէր յաշխարհն Վրաց հաւատոյ Թոշակաւն, որպէս զի որ անդն էին յազատաց նորա մերձաւորք, 'ի ձեռն նոցա հնարեսցի յառաջ եդեալ Ճանապարհն ։ Եւ անդ աւելի եւս լինէր աղաչաւանք, եւ գիշերական աղօթք անհանդիստ հանդերձ պահօք զԱստուած յօգնութիւն կոչէր ։ Եւ զատարւոյ միոյ աւելի կամ պակաս անդ անցուցանէր, դարձեալ եկն 'ի Հայս յԱրագածոտն ։ Իբրեւ օգնական հեծեալքն 'ի բաց կային 'ի նմանէ ձանձրութեամբ լքեալք ։ Էր և անդ իշխանաց դաւառին՝ որ մօտաւոր ազատքն էին՝ խորհուրդ առեալ, զի ընդ ամօր աշխարհն տարցուք յուղարկեալք, եղանիցեն 'ի Թագաւորաբնակ քաղաքն ։ Զոր ոչ բաւական համարեալ իւրայոցն,

զիշխանն և զկաթողիկոսն խորհըր-դակից առնէին ։ Որպէս կարծեմ դեւն այն որ յամենայնի լինէր քա-ջալաստակ, չարախորհուրդ մտա-ծութեամբ վաղվաղակի հասեալ՝ ահ արկանելով զօրապետաց, և քրիս-տոնէից վերակացուին, մինչեւ ա-սել, եթէ Երթիցէ գնասցէ 'ի բաց, զի մի մեզ և անձին կորուստ լինիցի ։ Զի թերեւս զերանելի այրն յու-րացութիւն կարիցէ ածել մերոյն Քրիստոսի ։

Եւ այսու առաւել եւս զայրա-ցուցանէին զսուրբն. և ապա յա-մենայնէ մերկացեալ լինէր յիւր օգնականաց և 'ի թոշակէն. բայց մարդ մի զոր ունէր յիւր սիրո-ղացն. սակայն և զնովաւ ոչ զանց արարեալ դիւին, որ ասէր, Եթէ ես երթամ զհետ ընկերաց իմոց, բայց տուր ինձ զքո երկվարդ և զսուսերդ. և ոչ մատնեմ զքեզ խնդրողաց արեանդ քո ։ Եւ նա հայեցեալ 'ի նորա խորամանկու-թիւնն՝ ետ 'ի նա և սիրով յուղար-կեաց ։ Եւ սակաւ մնացեալ թոշակն

զոր յառաջ բանն տուեալ կինն և արձակեալ 'ի տունն հօր իւրոյ, և ոչ ինչ ունէր առ իւր: Գնացեալ երթայր զրահս արկեալ զիւրեւ զհաւատս. և երթեալ հասանէր 'ի Վաղարշապատ քաղաք. և դիպեալ կաթողիկոսին ասէ. Երթ դնա յանապատ ուրեք, զի մի այլոց վնաս առնիցես:

Եւ անծանօթ լինելով յամենեցունց՝ երթայր մեծավաստակ աշխատութեամբ սպառեալ 'ի զօրութենէ անկանելով 'ի վերայ երկրի: Եւ ստէպ հասանէր այր մի դրաստով. հայեցեալ ոչ ինչ տեսանէր, բայց մատանի մի ոսկի զվաւերականն 10 իւր. զոր հանեալ տայր առնն՝ եթէ Տուր զիս յանապատ ուրեք: Եւ զխորհուրդս առ Աստուած ունելով զմտացն, այս բանք 'ի դէպ ելանէին. Անյիշաչար տէր, դու այն ես որ ընդ Յովսեփայ վաճառեցար, որ ուլով արեամբ գազանաց ժանեօք հանդերձին զպատառումն՝ հօրն ողբս առնէին եղբարքն. դու և զԴանիէլ ողջ պա-

հեցեր և զսուրբ մանկունսն 'ի հնոցին: Արդ անփոփոխելիդ Աստուած իմ, անօրէնութիւնք իմ մի յիշեսցին առ քեզ, զի անյաղթելի է քո մարդասիրութիւնդ. զերծո զիս 'ի դառն հոգոյս և 'ի նեղութենէս:

Եւ այսպէս մօտ լինէին աւուրք մեծի զատկին. և սորա մտեալ 'ի կրօնաւորութիւն՝ դադարէր ամիսս վեց, և աւազան զարտասուս արարեալ և միտքն աստուածախօս լինէին անշարժելի չրթամբ վերին իմաստութեամբն արբեալ լինելով: Բայց չարասէր դեւն որ զգայութիւն մարդկան շրջել սովոր է, երկեւղ արկանէր կրօնաւորացն. ազդ առնէր իշխանականոյն որում մօտաւորի, որ յղեալ յանապատան ասէ. Երթիցէ գնասցէ 'ի ձէնջ, զի մի անձինն և ձեզ լիցի պատճառ կորստեան: Եւ յարուցեալ գոհանայր զԱստուծոյ և ասէր. ընդ յառնել չարին պատերազմաւ՝ և ես 'ի քեզ յուսացեալ. եւ յ'աստուերավայր տեղիս մահու աներկեւղ արարեր զիս. և զցուպ և զգաւազան խաչի

քո սուրբ՝ մի հեռի առներ յինէն ։
Այս խոցեալ եմ գայլոյն ժանեօքն,
որպէս զայն որ յԵրիքով յաւա_
զակացն անկաւ ձեռս , մի կիսամահ
թողուր զիս . զի պէտս ունիմ պա_
տանաց և ողորմութեան ձիթոյ ։

Եկեալ հասեալ յանապատ ան_
յայտաւոր և սակաւամարդ տեղիս,
անցուցանելով զաւուրին մինչեւ 'ի
նոյն աշունն , մեկնահանդերձ, միա_
վերարկու , անթուլանալի սրտիւ
աշխատութեամբ . իբրեւ յոյժ ծա_
րաւկոտ եղջերուաց աղբերաց՝ փա_
փաքեալ նա Աստուծոյ սիրոյն . և
կերակուր զարտասուսն իւր արա_
րեալ որպէս սրբոյն Դաւթի , և նմա
թուեցաւ հաճոյ ։ Եւ այնուհետեւ
զկոյսն իւր 'ի մարդկանէ 'ի բաց
մերժեալ, արտաքոյ մարմնոյ իբրեւ
ընդ իմանալիսն լինելով, զհակառա_
կորդացն 'ի բաց թողուցեալ զսա_
տանայիւ ։

Զմտաւ ածեալ երթեալ հասա_
նէր անդ ուր իշխանն տաճկաց էր .
և յիւր հաւատոյն վերայ համար_
ձակութիւն խնդրեալ . մանաւանդ

զի ընտանի եղեալ գրոց սրբոց ,
զաստուածային սուրբ Հոգին ի-
րեւ ՚ի տաճարի վարդապետ և ա-
մենայն իրս օգնականութեամբ .
և խմայելական առասպելաբանու-
թեանն քաջահմուտ : Նա ոչ էթէ
յանդգնաբար ինչ ՚ի մահ դիմեալ
երթայր , այլ իւր ճշմարիտ հաւա-
տոյն հաստատութիւն խնդրէր , և
զնոցայն ՚ի բաց թողուլ զստու-
թիւնն . Զի ես ոչ կատարեալ մտօք
զնոցայն ընկալայ , ասէր սուրբն ,
այլ ՚ի տղայութեան հասակի առա-
ջի երեւեցաւ ինձ ճշմարտութիւնն
և ստութիւնն . և ինձ բանք իրացս
գտանին խօսիցս 11 : Զի թէ իւ-
րեանց բանութիւնն զիս տանջէ և
յիմն ոչ հային իրաւունս , և ես ոչ
տրտմիմ . Քրիստոս վասն իմ մե-
ռաւ , և ես տասնպատիկ վասն նո-
րա սիրոյն լինիմ յօժարագոյն . ընդ
թշնամանացն՝ թշնամանք , ընդ հա-
լածանացն՝ հալածանս , ընդ կա-
պանացն՝ կապանս , ընդ տանջանին՝
դատաստանս , ընդ սուտ վկայից
արդար վկայս՝ եթէ քրիստոնեայ

եմ. ընդ չարչարանացն՝ չարչարանս. ընդ Կիւրենացւոյն՝ բառնամ զիմ փայտն. ընդ գեղարդեանն՝ սուսեր: Եւ այսպէս ըստ նախանձուն Պաւղոսի՝ լնում զպակասութիւն նեղութեանցն Քրիստոսի 'ի մարմնի իմում, միայն եթէ արժանի արասցէ զիս Աստուած:

Եւ էին ոմանք որ արգելուին զնա թողանալ 'ի խորհրդոցն. բայց նա ոչ հեշտանայր այնր խրատուց. այլ եղբարց յորդորումն ընդ լնելիս մեռեալ՝ քաջալերէր հանապազ: Եւ հասեալ ժամ գնալոյ՝ լուր լինէր կրօնաւորի ումեմն, որ էր առաջնորդ ուխտին 12, անուն Յովհաննէս՝ պատրաստէր նմա գրաստ և վերարկու 'ի պէտս ճանապարհին, որ աստուածպաշտութեան սիրովն եղբայրացեալն էին: Եւ ոմն 'ի մանկագունից եղբարց զոր փոխանակ իւր յորդորեաց երթալ ընդհետ 'ի սպասաւորութիւն սրբոյն: Եւ զայն ամս չորս որ հանապազ նեղութեամբ շրջեալ եղեւ աստուածասէրն ընդ նմա. զոր երից

սքանչելեացս տեսեալ երեւումն՝ որում չեմ բաւական պատմել. զոր և Տարսոնացին 13 զիւրն ասէր, լոյս տեսանելով և զձայն ոչ լսեալ. յորում յերկուեան էր անհաւատութեամբ: Արդ. այնպիսի ինչ տեսել՝ չէ անհնար. որպէս եթէ հոգւոյն ակամբ տեսանել զնոյն ինքն զտէր և լսել. Մի դանդաղիր զի ես ընդ քեզ եմ, և անյաղթելի առնեմ զքո բանդ, և ընդ առաջին սուրբսն դասեմ զքեզ:

Եւ հասեալ 'ի տօն սուրբ խաչին բազում զղջմամբ մտանէր 'ի տաճարն Աստուծոյ: Եւ այր մին 'ի վանացն՝ որ Մաքենոցն կոչեն, Սողոմոն անուն, տայր նմա գիր քաջալերութեան, և հանդերձ մի 'ի պատճառս թոշակի: Իսկ երանելին այս բազում արտասուօք 'ի յոլովից՝ յուղի անկեալ յանդառնալի ճանապարհն, որպէս տիեզերաքարոզն 13 'ի Հռոմ. գայր հասանէր 'ի գաւառն Բզնունեաց 'ի գեւղն որում անուն էր Արձկէ. եկեալ յանապատ որում անուն Երաշխա-

ւոր կոչէն, յոտին Մասեաց, որոյ առաջնորդ էր հայր ոմն, որոյ անուն Արտաւազդ, որ իբրեւ զԱբրահամ սիրով ընկալաւ զնա աւուրս երիս. և 'ի գնալն պատրաստեաց նմա զճանապարհին զպէտսն: Եւ զայն սքանչելիքն Աստուծոյ առնէին, զի զամենեցունց զմիտս զհետ ձգէին սիրով. և երթայր և հռչակելի լինէր:

Եւ բազում հեծելոց դարձեալ 'ի պատերազմէ 'ի հիւսիսային կողմանէ, և զհետ հասանէին գունդք գունդք վխճելով ընդ նմա. և ոչ կարէին զդէմ ունել որով խօսէր ընդ նոսա յաստուածային գրոց, ճշմարտացուցանելով վասն Քրիստոսի թէ որդի Աստուծոյ է:

Եւ հասեալ 'ի մայրաքաղաքն Ուռհայ, երկրպագէր փրկչական պատկերին, խնդրելով զթողութիւն ողջական անգիտութեանն: Եւ անտի 'ի Կաղանեկոս 14 եկեալ, անցին ընդ գետն Եփրատ. և զճանապարհն մեծաւ աշխատութեամբ վճարեալ, գայր հասանէր 'ի քա-

զքն Ռուծամի 15, որ էր բնակութեան Շամ 16 իշխանին Տաճկաց։ Եւ ապա զպատանին որ էր ընդ իւր՝ արձակէր 'ի տեղի իւր. և ինքն արտաքոյ քաղաքին դադարէր սակաւ աւուրս, զմտաւ ածելով, իցէ որ ծանուցանէ զնա յարքունիս։

Զ. Բայց թուի ինձ թէ դիւին անցն և անդ ընթացեալ լինէր. որ և իւր խորհրդակցացն զայն ասէր, թէ հեռացուցանեմ զայրս զայս 'ի Քրիստոսէ, և մտաւոր առնեմ դժոխոց. բայց դուք մատակարարեցէք ինձ եղբարք օգնականութեամբ, զի կարի լքոյց զիս։ Եւ եկեալ բազմութեանն խորհրդակցացն արքունի՝ շուրջ նստեալ առնին. Մի մոլորիր 'ի հեշտութենէդ 'ի դժուարութիւն. առ 'ի քեզ զփառաւորութիւն քո, և յիշեա զմեր պատգամաւորն, որ ետ մեզ զաշխարհի մեծութիւն, և անդ ըղգրախտին փափկութիւնն պատրաստեալ մեզ պահէ, և ձեր Քրիստոսն խաչեալ 'ի Հրէիցն՝ մահ 'ի ձեզ բազմացոյց։

Իսկ նա զօրացեալ սուրբ Հոգւոյն ասէր. Որ ձեւքդ ընդ իս խօսին, դուք 'ի Գերդաստացւոց յերկիրն 'ի վերայ խողիցն խնդրեցին ընել իշխան, և 'ի ծովուն 'ի բազմութեան ջուրցն հեղձան. մեռցին և ձեր բանքդ 'ի ձեզ, ընդ վայրապար խրատ չարութեանդ: Եւ յաղթեալք 'ի նմանէ գայթակղէին յիւրեանց սովորութենէն:

Եւ նորա յԱստուած խրախուսեալ՝ երթայր առ դպրապետն որ յառաջն եղեալ էր նորա վարդապետ, և ծանուցանէր նմա զիւր զխորհուրդն. Եթէ Ճշմարիտ յուսով աներկեւղ եմ. այլ ասեմ քեզ, պատմեա զիմ զիրս ամիրապետին: Եւ նորա ծանուցեալ զհամարձակութիւնն նորա, և զարհամարհանսն որ առ նոցայն հաւատսն. և սաստեաց նմա խստագոյն սպառնալեօք. քան զմահուն կտտանաց աւելի ցուցանէր վտանգ զանըմբերելի իրաց, և յետ այնորիկ թըռչնոց լինել կերակուր, հանապազ աւաղել զքրիստոնէից: Իսկ ուրա-

խութիւն սրտի նորա զգոյն երե-
սացն պայծառացուցանէր , և ոչ
երբեք հայելով տխուր : Եւ իբրեւ
զայն տեսանէր դպրապետն , յողոք
անկեալ պարգեւս խոստանայր յար-
քունուստ և իշխանութ̃ի , թէ միայն
հաւանեսց . և երդմնեցուցեալ
տայր նմա երեսուն դրամ , և յիւր-
մէ 'ի բաց առաքէր : Զոր առեալ
յաղագս երդմանն՝ առաջի նորա
աղքատաց բաշխէր : Եւ ինքն բաց-
օթեայ լինելով զժամանակն ցրտա-
շունչ ձմերայնոյ , սակաւահան-
դերձ և նուաղկերակուր իբրեւ
զանմարմնաւոր :

Ապա երթեալ առ իշխան ոմն , որ զպետութիւն եկամտիցն ունէր , և նա յահէն շատ անասելի , չառ-նոյր յանձն զիւրն ցուցանել եթէ Ոչ բերեն լսելիք նորա զիրդ զայդ , զի մահաբեր է բանդ այդ . ինձ խռովութիւն , և քեզ մահ . որ և ասաց նմա երթալ գնալ 'ի բաց . զի Սուր ասէ , 'ի քո մարմինդ , մի գուցէ և յայլոց զարթուցանիցես : Իսկ նա ոչ աստուածահաճոյ զխրատն

համարեցաւ, թէ իբրեւ զվատ փախ-
չիցի 'ի պատարագմէ: Իբրեւ ոչ դը-
տանէր եւս իրացն կատարմանն, ան-
կանէր առաջի Աստուծոյ խնդրե-
լով. որ և գրով խօկ գտաք զնորա
աղօթս այսպէս ասելով.

Միածին որդի Աստուծոյ, որ մո-
լորելոյ աշխարհին հովիւ կոչեցար, և
գտեալ զնա ուսով քո բարձեր, և
տարածեալ զբազուկս 'ի քեզ ժո-
ղովեցեր զախեղելս, մի անօգնական
թողուր զիս զօտարս, լուա՛ զյան-
ցանս իմ քոյով արեամբդ և կեն-
դանարար մարմնովդ, որ մանա-
նայդ ես անմահութեանց, յերկնից
իջեալ հաց մեզ պարգեւեցար. իմ
Յիսուսփրկութիւնաբեր աշխարհի,
որ Հօր և Հոգւոյդ սրբոյ և քո իսկ
կամաւորութեամբ՝ մեզ եղեր զե-
նումն, և առաջնորդ կենաց ճանա-
պարհին. Հայր սուրբ և Որդի
սուրբ, և Հոգիդ սուրբ, որ մեր
խոստովանութիւնս Երրորդութիւն
և մի աստուածութիւն, մի դէմս,
երեք անձնաւորութիւն, հեռի յա-
մենեցունց և մօտ առ ամենեսեան,
որում փառք յաւիտեանս, ամէն:

Եւ յետ գոհութեան աղօթիցն երթայր առ դահճապետ ոմն, որում անուն էր Վ. Քաբէշ որ Հիմացւոց 18 իշխան էր: Եւ ծանուցեալ նմա՝ յօժարագոյն եղեւ նմա պատմելն: Եւ առեալ տանէր զնա առ բռնաւորն. և իբրեւ զգիրն ընթերցաւ, զարմացաւ ընդ գեղեցկագիծ և ընդ ճշմարտարան դիրս բանիցն. ետ հրաման ածել առաջի իւր, և հայեցեալ 'ի նա՝ հեշտալի բանս խօսեցաւ. եթէ ընդէր Վահան աղքատահանդերձ երեւիս 'ի քո փառաւորութենէն. ուրեմն երկիրն Հայոց իջոյց զքեզ յայդ: Պատասխանի ետ սուրբն և ասէ. Եթէ Տէրն իմ զանձն իւր ունայնացոյց կերպարանօք ծառայի իջեալ յաղքատութիւն յաղագս մեր, և հնազանդեալ մահու խաչի, արդ զոր նա վասն իմ համբերեր, յայնմանէ և ես ոչ վերջանամ: Ասէ բռնաւորն. Սառնապատ լերանցն Հայոց չար դեւքն զքեզ պատրեալ մոլեգնեցուցին ընդ վայր խօսել: Ասէ այն. Զոր յառաջն ունէի ըստ

ձեր օրինացդ՝ հալածեցի յինէն. զի խաւար 'ի լուսոյ փախչի, որպէս ձերդ յինէն: Ասէ դատաւորն. Ասեն ձեր մոլար օրինացն իմաստունքն, եթէ գիւացն 'ի վայր անկեալ՝ այլոց չարք եղեն. և ստոյգ է. զձեզ 19 նեղեն աստ և ուր յուսացեալ էք երթալ: Բարբառեաց այր, ընդ մոլեկանաց նմանեալ քեզ, 'ի բացէ 'ի բաց ձգես զփառաւորութիւն կենաց քոց:

Եւ հրաման ետ գանձաւորապետացն բերել գանձս ոսկւոյ և արծաթոյ, և հանդերձս մետաքս առաջի զանազանագոյնս. և ասէ ցնա. Թշուառական և չարասէր, առ զայդ ամենայն, և ծառայս և աղախնայս, և ձիս և ջորիս և ուղտս. և իշխանութիւն քեզ, թէպէտ աստ թէպէտ 'ի Գողթան. զքո անկաւոր իշխանութիւնն: Ած զմտաւ զմեր պատգամաւորն, որ ետ մեզ զիշխանութիւնս զայս մեծ, և անդ զդրախտին փափկութիւն պատրաստեալ մեզ պահէ: Եւ սուրբն պատասխանեալ ասէ. Յառաջագոյն

լուեալ է իմ զՃարտարիմաց բազմա-
հնար խորամանգ խորհրդոց քոց ,
զբազումս որսացար Ճարտարու-
թեամբ քո 'ի վիհս կորստեան , դե-
հենակից քեզ առնելով . զոմանս
աչարկու ձայնիւ , և զոմանս ող-
քական շողոքորթ բանիւք . զոմանս
մնոտիապատիր կարասեաւ և այ-
լովք ստացուածովք . զոմանս ան-
ցաւորական իշխանութեամբք և
պատուով պերճացուցեալ . և զբա-
զումս սուտ յուսով խաբեալ , յա-
ւիտենից կենացն և փափկութեան
դրախտին լինել խոստանալով . և
ամենեւին իսկ ջանացար քո բազ-
մահնար իմաստութեամբդ զողդող-
դամիտն հանել ընդ արձակ պողո-
տային , և յետադարձութեամբ կոր-
ծանեցեր 'ի խորխորատ կորստեան .
ընդ որս տալոց ես պատասխանի
յաւիտենից տանջանսն գեհենին
այրմամբ : Բայց ծառայիս Աստու-
ծոյ ոչ կարես յաղթել չարահնար
մենքենայիւք քոյովք , որ պարըն-
պեալ եմ աստուածային երկեւ-
ղին և գիտութեամբն ամրացեալ.

գրովք որբովք պահպանութեամբ պատուիրանացն Քրիստոսի , և կիրթ և հմուտ առաւել քան զձեզ՝ ձերում առաքելական մոլորութեանդ ։ Վասն զի . . . . . . . . պեան ձեր , զոր . . . . անուամբ մարգարէ կոչէք , մեռեալ է , և ոսկերք նորա և գերեզմանն առ ձեզ է . և դու առ Աստուած մերձեցուցանես և դրախտապետ կոչես զնա, զոր տեսանող կամ բանբեր ձերում մոլորութեանդ լինիցի , կամ թէ խօսք ։ Բայց թէ առ իս առնես բարի այս , տուր ինձ համարձակութիւն ըստ քրիստոնէից սովորութեան , համարձակ ունել ինձ զաւանդութիւն կարգաւորութեան իմոյ . և չեն ինձ պէտք այդ անցաւոր մեծութիւնդ . և եթէ կամք են քեզ, և զգաւառն իմ առցես յինէն , զի թողլոյ եմ որպէս ամենայն մարդ։ Ո՞ւր է քո հօրն տիեզերական իշխանութիւնն, կամ ո՞ւր իցէ եղբարց քոց բռնաւորութիւնն . ոչ ապաքէն սուեր եղեալ և քեզ՚ի վայրկեան ժամանակս , որ և դու նոյն փոխելոց ես ։

Յայնժամ բռնաւորն բարկութեամբ լցեալ՝ հրամայեաց հանել զնա արտաքս և արկանել 'ի բանդ, և զոտս նորա պնդել 'ի կոճեղս: Եւ իբրև տարան արկանել զնա 'ի կապարանն, աղաչեաց զերկուսեան զոտսն արկանել 'ի կոճեղն: Եւ նոցա զարմացեալ ընդ յօժարութիւն համարձակութեանն, կատարէին զխնդրուածն:

Եւ արձակեալ դեսպանս փութով առ Մրուան, որ 'ի ժամանակին 'ի Միջագետս հանդիպեցաւ, որպէս զի 'ի նմանէ տեղեկացեալ ստուգիւ գիտասցէ յաղագս սրբոյ առնն: Եւ նորա գտեալ արս քաջատեղեակս, փութապէս արձակէր առ ամիրապետն: Եւ նորա կացեալ 'ի բանդին աւուրս ութ, ըղմարմնոյ հեշտութենէ ամենեւին անփոյթ արարեալ, անքուն աչօք, աննինջ արտեւանօք, զհանդիստ 'ի վայրաքարշութենէ 'ի վեր բերեալ և Քրիստոսի առնել խաչակից, զի զօրացուցանէր զնա սուրբ Հոգին: Իսկ բռնաւորն զայն աւուրսն ոչ

դադարէր յղել առ նա զհրեանց օրինացն զվարդապետութիւն 'ի վիճել. որպէս զի յաղթեալ 'ի Նմանէ 'ի գրոց ինչ 20, և յաղթեալք 'ի նմանէ և ամաչեցեալք դառնայցին առ իւրեանց իշխանն. և ասէին, թէ Չէ ումեք լսել բան, բայց սուր որ զբանից մերկանայ զխօսս: Իսկ նորա պատուիրեալ չասել ումեք ըղխորհուրդն:

Եւ ապա եկեալ 'ի բանդն ճըշմարտասէր Յակովբիկ ոմն և ասէ ցսուրբն, եթէ վերջին կենաց քոց թոշակ զմերս առ զմարմին և զարիւն Քրիստոսի 'ի փրկութիւն քեզ, զի յիմումս հանդիպեցաւ ժամու քահանայութեանս: Եւ նա ասէ. Իմ արեամբս մկրտեցայց, վերջին բաժակաւս ելից յաշխարհէս: Եւ հասեալ տօնին զոր ողոգոմեանն 21 կոչեն իբրեւ օրհնեալ օր. օրհնեալ զԱստուած սուրբն խորհրդածութեամբ. և ասէ ցբանդապետն. Խաղաղութեամբ թողից զքեզ յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս, զի գըթութեամբ զիս ընկալար: Եւ զար-

մնացեալ այնր ասէ . Զի՞նչ է բանդ որ ասես . և ես քեզ չեղէ հանդըրտեան ինչ դիւրարար, զի դու զայնպիսի իւր մերժեցեր 'ի բաց . զի թէ յայլ իւր չունէի իշխանութիւն, առ սակաւ իւր քաջ կամէի հաղորդել քում նեղութեանդ հանդերձիւ և կարասիւ արդեւք, եթէ և այլ ինչ իրօք . բայց դու ամենեւին չարարեր մխիթարութիւն մարմնոյ . զի երեւէր շնորհ 'ի քեզ ոչ միայն 'ի տունջեան, այլ և 'ի գիշերային ժամս 'ի լուսաւոր տեղւոջ երեւեալ լինէիր : Բայց այժմ հրաժարման իմն ցուցանես իւր, զոր չէ իմ լուեալ ինչ : Եւ գոհացեալ զնմանէ՝ ասէ . Հատուցանողն երախտեաց չէ հեռի . և ահա անցաւորքս որմնոտ յիս՝ փնացեալ երթան :

Է . Եւ 'ի վաղիւ անդր եկին հասին 'ի հիւսւսական իշխանէն, նուընթաց 22 ձիովք՝ պատմել զրոյցս, որ քննեալ էր զամենայն՝ ճշմարտութեամբ ասել զնմանէ, եթէ Յիմաստութենէ ոչ օտար և բարե-

տոհմիկ, այլ և ոչ հիւանդ ոք, կամ այլազգու կամ օտարոտեան : Եւ հրամայեալ ածել զերանելին. իբրեւ կարծեալ եթէ լքեալ իցէ անխատութեամբ նեղութեանն և բանդարգել կապանացն. և հարցեալ եթէ Եկիր 'ի մոլորութենէդ 'ի ճշմարտութիւն, զոր զմերս ուսար 'ի մանկութենէ վարժից հրահանգիւք, եթէ 'ի նոյն յամառութեան կաս պնդութեամբ : Եւ նա ասէ. Ճշմարտութեան չէ օրէն այլ և այլ ինչ ասել, և ոչ զլոյսն խաւար, և ոչ զխաւարն լոյս. բայց որ ինչ կամք են քո՝ արասցես :

Ասէ ցնա իշխանն. Վերադոյն իմն հաւաստեաւ քննեալ և 'ի քեզ ստութիւն ինչ ոչ տեսեալ և ոչ 'ի քո ազգի. զի խնամատուն եղեալ էին. և եթէ յօտարապաշտ ազգի 'ի գործ կացեալ յիւրեանց սովորութենէն չէին փոխեալ : Բայց դու չարի օրինակ եղեր մեզ, զի 'ի քոյդ հայելով և այլք յայդ անկանին. արդ չէ որ ժամ բարի առնել քեզ. զի դու զքո բանդ հրապարակախօս արարեալ

արկեր յամենեցուն լսելիս, զմիրս 'ի ստութիւն դարձուցանելով, որ քո վայդ չնորհ ոչ 'ի ձերոյն այլ 'ի մերոյս էր գտեալ, այլ քո յանդըգնութիւնդ յիմ ներողութենէս եղեւ :

Յայնժամ միաբանութիւն եղեւ ամենեցուն որ առաջի նորա նըստէին . աղաղակէին ամենեքեան որպէս զի անյապաղ փութով զաւեսցի նա 'ի կենցաղոյս . և չնչեալ այսոյն չարի առ հասարակ յամենեսեան : Եւ չըջեալ զգոյն երեսացն ամբարշտեալն, և հրամայեաց հանել զնա արտաքս և սպանանել : Եւ նա երթայր հեզաբար անըրտունջ երեւօք, սաղմոսէր տանելով . Առ քեզ տէր համբարձի զհոգւոյս ակն . որպէս աչք ծառայի 'ի ձեռն տերանց, նոյնպէս և իմ մտաց տեսութիւն առ քեզ հայի . և որ ըղկնի սորին սաղմոս մինչեւ 'ի տեղի կատարմանն . և Տկարութիւնս իմ ապրեալ եղեւ յորոգայթից նոցա : Եւ կոչեցեալ զդահճապետն՝ Համայ, Երթ, առէ, հան զնա արտա-

քոյ քաղաքիս, և ողոքեա, Թերևս դառնայցէ . ապա Թէ ոչ՝ ահարկութիւն արկ սուսերաւդ, և մօտ առ նովաւ լինելով, ասա Թէ Մի մեռանիր տարաժամ:

Եւ երԹայր զհետ նոցա բազմութիւն քրիստոնէից բացադոյն . և ողբք խանդաղատալից արտասուօք լինէին աղբիւրացեալ: Հասեալ 'ի տեղի կատարմանն ցնծալից ուրախութեամբ, և զձեռս յերկինս համբարձեալ, ասէ . Գոհանամ զքէն, որ հանապազորդ հառաչմանս իմոյ լուար և զփափագումնս լցեր, և զլուծումն կապակցութեան հասուցեր մահու սրբոց քոց վկայից . և արժանի արարեր մեռանել վասն մեծի անուանդ քո . արդ յիշեա զմեզ տէր, զի վասն քո մեռանիմք զօրհանապազ . և արա յամօԹ ըզպերճացեալսն յինքեանս երկրաԹաւալ, անաանամիտ, դատողական՝ մարմնասէր դեգերմանց ձախոյ կողմանն . և զմանկունս եկեղեցւոյ քում սրբոյ անարատ պահեա անշարժ որպէս 'ի վերայ վիմիդ հա-

ւառոց, և 'ի միւսանգամ գալստեան քո արժանի արա յերկնաչու պողոտայն ընդ առաջ ելանել քեզ յերկնային խորանսդ որպէս զորդիս լուսոյ, փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

Յայնժամ դահճապետն զայրագին ցասմամբ ասէ ցնա. Ոչ կամեցար հաւանել բանից իմոց, արդ ելեալ կատարեցից զհրամայեալսն 'ի վերայ քո: Եւ սրբոյն պատասխանեալ ասէ. Եթէ արդեօք ձեր սովորութիւն է արհամարհել զհրամանս վերակացուին ձերոյ, իսկ ինձ անհնար է անցանել զպատուիրանաւ երկնաւոր Թագաւորին իմոյ: Յայնժամ դահճապետն հարկանելով նմա, հանեալ զոսկերն փայլեցոյց հարկանելով սակաւ մի, ըստ հրամանի արքունի, զարիւնացայտան ցուցանելով. Նա ոչ ինչ զարհուրեցաւ: Ասէ դարձեալ ցնա. Զինչ կամիս: Սուրբն ասէ. Արա զինչ կամք է քո: Եւ այնուհետեւ այլ ոչ եւս խօսեցաւ: Ասէ դարձեալ

սպանողն․ Ա՜յ տառապեալ, ահա եկն եհաս քեզ դառնութեան օր, և դարձեալ կենաց՝ եթէ կամիս․ արդ ընդէր ոչ ընտրեցեր զկեանս, այլ զմահ սիրեցեր։ Ասէ սուրբն․ Ընտրեցի զմահ վասն Քրիստոսի, քան զկեանս անցաւոր։

Եւ ապա սպանողն՝ յառաջ առաց ունել զպարանոցն, և վերացուցեալ զսուրն՝ եհատ զգլուխն․ և ինքն նոյնժամայն անցեալ գնաց։

Կատարեցաւ սուրբ վկայն Քրիստոսի երանելին և մեծն Վահան, որ օր եւթնեւտասներորդ էր մարտի ամսոյ 'ի շաբաթու զատկի պահոցն երկուշաբաթու, յիններորդ ժամու, և 'ի քսանեւեւթն մարերի ամսոյ։

Ը․ Էին անդ յընտանեաց արքունի, որք լսէին և տեսանէին զայն ամենայն, զի հոսեալ արիւնն 'ի մի վայր ժողովէր խոստովանողին Քրիստոսի․ և տեսողքն սքանչելի իրացն 'ի ժամու կատարմանն՝ զփառաւորութիւն երեսացն պատմէին

զգանչելի պայծառութեամբ ։ Իսկ քրիստոնեայքն որ սպասէին անյապաղապէս նշխարս ինչ առնուլ, յերկեւղէն ոչ իշխէին մերձենալ. և անկեալ դնէր սուրբ մարմինն 'ի գետին, 'ի տեղւոջն ուր զմահապարտսն ընկենուին ։ Եւ շանց սովորութիւն էր ժողովել յայն տեղին. արդ 'ի հասանել գիշերոյն եկեալ պատրաստաբար բակ առեալ բացագոյն՝ կացեալ իբրեւ պահ մի գիշերին, և յանկարծակի 'ի միմեանց ժանեաց ծակոտեալք՝ փախստական լինէին ։

Եւ 'ի միւսում աւուրն՝ ոչ գիտեմ եթէ տեսիլ գիշերոյն և եթէ այլ ինչ արհաւիրք 'ի վերայ անկեալ, բայց ներքինապետն ելեալ յարքունուստ ձայն արկեալ, Եթէ կայցէ ոք աստ 'ի քրիստոնէից՝ յառաջ եկեալ բարձցէ զմարմինն, և տարեալ արասցէ ըստ իւրեանց սովորութեանն ։ Իսկ յառաջ եկեալ քրիստոնեայքն՝ զահ երկեւղին ցուցանէին ։ Չկայ ինչ խռովութիւն յիրադ, բարձէք խաղաղութեամբ ։

Եւ իբրեւ լուրն տարածեցաւ, ժողովեալ բազմութիւն քրիստոնէից և հաւաքեցին զպանծալի աճիւնն յաղթող նահատակին Քրիստոսի. և զերկիր բրելով փորեցին. և ջերմութեամբ սրբոյն հաշիւ լեալ պատերազմ յուզէր։ Եւ գտանէր անդ Հռոմայ և Յակոբիկ, նոտարական բազմութիւն արանց և կանանց. և յարենէն և 'ի հանդերձէն նշխարս առեալ խաղաղանային։ Եւ առտուրբ մարմնոյն իւր՝ զուգախորհուրդ լինէին. ասելով, թէ որ Օտարաց կոչի գերեզման, առ ժամն անդ տարեալ հանդուցուք զմկայդ. և որոց անկասորեալ լինի՝ յետոյ հաշուեսցուք զմկայդ։ Եւ իբրեւ տարեալ դնէին անդ, մեծ մի չորեքկուսի տաշեալք 'ի քարանց կափարիչ դնէին. և ապա գնացին յիւրաքանչիւր տեղիս։ Եւ յետոյ կարծիք լինէին, թէ գուցէ ոք նենգիցէ զպատուական մարմինն։

Այլս այր մի 'ի գործակալաց ուրումն աստուածապաշտ, Հռոմ ազգաւ, անուն Թէոփիլէ, որ բա

Ինքեանցն՝ Նրսու Սոսփան կոչէին, միաբանեալ ընդ իւր արս չորս բառնալով զպատուական գանձն, և հրամայեաց տանել տապան 'ի ծածուկ. և 'ի նսեմանալ աւուրն, եկեալ ինքեանք չորք արքն, առեալ 'ի չիրմէն եդին 'ի տապանի. և տարեալ ամփոփեցին յիւրում սենեկին: Եւ 'ի նմին գիշերի յայտնեցաւ եպիսկոպոսի մի 'ի քաղաքին, և ընդ լուսանալն կոչեաց զնոսա որ բարձին, և զծածուկն 'ի նոցանէ զգործեալն պատմէր նոցա ըստ տեսլեանն: Իսկ եւ անյայտ լինէր չինել նորա անդ 'ի չիրմին 'ի սեղանոյն, համբաւ ընթացուցանէին, եթէ վաճառականք գողացան զերանելի սանն զմարմինն, և ընդ կողմն Բաղդադու 23 ինքեանց յերկիրն Պաղեստինացւոց. և անծանկելի ճշմարտութիւնն յայտնի լինէր տարակուսելոյն:

Զի հիւանդ ոմն էր մերձ 'ի մահ. տեսանէր զոմանս 'ի տեսլեանն որ ասէին ցնա. փութա խնդրեա հող 'ի տապանավայր սեղեացն սքանչելի

տունն Վահանայ, և այնիւ օծեալ կեցցես: Նոյնժամայն բերեալ զայն, հրամայեաց և զինքն տանել 'ի տեղին, և առողջութեամբ գնաց 'ի տուն իւր: Իբրև զայն տեսին համարձակութեամբ յորդորեալ առ 'ի պատիւ սրբոյն, չինէին 'ի վերայ նորա մատուռն սակաւաշխատելի գործով: Եւ մօտ 'ի տեղի սրբոյն ապարանս գնէին աղքատնի. և ոմն 'ի բարձողացն զմարմինն սրբոյն՝ գործավար հանդիպեալ, 'ի քաջաբարձր տեղեացն 'ի վայր հոսեալ, զաղաղակ բարձեալ մեծաձայն ասէր. Օգնեա ինձ, սուրբ Վահան. և իջեալ կայր 'ի վերայ ոտից իւրոց: Եւ տեսողաց և լսողաց իջեալ տեսին զայրն յոտն կացեալ: Եւ նա ասէ. Տեսի զքանչելիս ընդ որ հիացեալ եմ յոյժ. զի որպէս ընդ առաջ իմ եկեալ սուրբ վկային՝ ունելով զիս. յոր կարծեցեալ եթէ բուռն հարեալ կալայ զնա՝ որ չէ նա առ իս: Եւ ահաւասիկ տեսանեմ զիս ողջ առանց վնասու:

Իբրև զայն ամենայն սքանչելի

տեսին, անյապաղապէս շինեցին 'ի վերայ եկեղեցի վայելուչ հանդերձ վկայարանաւ առանց երկեւղի. որ ոչ յեկեղեցւոջն՝ այլ 'ի վկայարանին փոխել դնէին զմարմին մարտիրոսին. 'ի կողմանէ հիւսւսոյ սրբոյ սենեկին, Թրծեալ աղիւսով և կրով կազմէին, պայծառացուցանէին կանթեղօք, և այլովք սպասու զարդարէին: Եւ այնուհետեւ բազմութիւնք հիւանդաց և ախտաժետք բժշկէին, և համբաւ ընթացեալ լինէր ընդ ամենայն կողմանս. և որք հասանէին յաշխարհաց և յարքունիսն անցանէին, առաջի անկանէին սուրբ վկային, և երկիր պագանէին սրբոյ Երրորդութեանն:

Թ. Գործեցաւ այս յաւուրս Հռոմայ յամիրաւին, յայնկոյս Եփրատայ գետոյն, 'ի Ռուծափ քաղաքի:

Իսկ յետ եւթն ամի՝ կրօնահայրն Աբրահամ, որ և Արտաւազդ, առնոյր ընդ իւր ոմանս յեղբարցն, և իջեալ յԱսորեստանս, հասանէր

'ի քաղաքն Կաղնիկոս · անդ 'ի
քաղաքին էջ և օթեվանս արարեալ
'ի կրօնաւորանոցին՝ որ կոչէր Դեր.
ման Ջակքէ , որ բաղում սիրով
ընկալաւ զմեզ , և խրատ տայր որ.
պէս զի մեծ զգուշութեամբ երթի.
ցուք 'ի տեղին , զի մի բուռն ան.
կեալ 'ի թշնամեացն պատիժս կրես.
ցուք և մեռցուք : Ապա զեղբարսն և
զգրաստսն անդ թողեալ , առեալ
ընդ իւր զմի ոմն , և զախուն և ըղ.
գիշերն անցեալ մեծաւ աշխատու.
թեամբ , ապա ընդ արշալուշսն ա.
ռաւօտուն հասանէր 'ի տեղի կա.
տարմանն : Եւ մտեալ 'ի վկայա.
րանս սրբոյ նահատակին , երկրպա.
գութիւն և գոհութիւն մատուցա.
նէր Քրիստոսի : Եւ Թէոփիլէն 24
այն որ և Աբու Ստեփանէ , բաղում
սիրով և գթով ընդ առաջ ելեալ
մեզ և հանգոյց զմեզ . 'ի ձեռն նո.
րա արար մեզ Աստուած մտանել
'ի սուրբսն : Եւ երկրպագեալ
տեսան 'ի վկայարանս սրբոյն Սար.
գսի , և տեսեալ զեպիսկոպոսն այլ
Ճշմարիտ և երկիւղած յԱստուծոյ

և բաղում սիրով և հիացմամբ ընկալաւ զմեզ ։ Եւ ապա կոչեցեալ զամենայն գիտուն մարդիկն՝ որք երեւելիք էին ՚ի դրան արքունի, որք քաջ տեղեակք էին վկայութեան սրբոյն. յորոց ուսեալ հաւաստապէս հոռոմ գրով ետուն մեզ զվկայութիւն քաջ նահատակին ։

Եւ սիրով հրաժարեալք յեպիսկոպոսէն և յայլոցն, և աղօթեալք ՚ի վկայարանի սրբոյն Վահանայ, գոհացաք զողորմութենէն Քրիստոսի. և անտի դարձեալ անցաք ընդ գետն Եփրատ, և առեալ զեղբարսն եկաք ՚ի քաղաքն Ուռհայ. և աղաչեալ զեպիսկոպոսն՝ թարգմանեցաք զգիրսն ՚ի հայ լեզու ։ Եւ անտի գնացեալք եկաք ՚ի Հայս մերձ ՚ի տուն Յայտնութեանն ։ Եւ գտեալ զեղբարս մեր ողջ, և խաղաղութեամբ գոհացաք զԱստուծոյ, որ զանարժանութիւնս մեր արժանիս արար հանդիպիլ այսմ շնորհի ։ Եւ ապա սկսայ պատմագրել, սկիզբըն առնելով ուստի արժան իսկ էր.

՚ի նոյն յարեալ զվկայութիւն սրբոյն Վահանայ վկային, ՚ի յորդորումն ամենայն հաւատացելոց, ՚ի փառս և ՚ի գովեստ Աստուծոյ, որում պատիւ և զօրութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ժ. Արդ յետ ըմպելոյ զբաժակ պատուհասի աշխարհիս Հայոց ՚ի հարիւր յիսուն և երկուք թուականին Հայոց՝ այս գործեցաւ, և զերեսուն և չորք ամս կացին ՚ի գերութեան, մինչև ՚ի հարեւր և ութսուն և վեց ամ թուականին. յորում հանդիպեալ վկայութիւն սրբոյն Վահանայ, խոստովանելով զՏէր Յիսուս Քրիստոս զորդին Աստուծոյ:

Արդ ՚ի ձեռն այսց վկայութեանց, ձեզ հարց և եղբարց, ես 25 տառապեալ անձնս և հանապազահիւանդ, և խորհրդապահ սրբոյ վկային, և վերստին պատճառք յորդորմամբ գրոցս վկայութեան, աղօթս առնել ՚ի վերայ իմ աղաչեմ,

որ զիմ անարժանութիւնս արժանի
արար գրել և տալ զայս պատմու-
թիւնս վերջնոց. զի թերևս ձեր
աղօթիւք գտայց զերծեալ ՚ի վտա-
թարաց դասու. և որոց ասեն եթէ
Եկայք օրհնեալք Հօր իմոյ, նոցա
արժանի եղելոցն հանդիպել ա-
րասցէ Քրիստոս, և զմեզ և զամե-
նայն հաւատացեալքս անուան իւ-
րոյ: Որում փառք և երկրպագու-
թիւն ընդ Հօր և սուրբ Հոգւոյն
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆՑԻՑ

## Ի ՀԱՐԱԽԱՑԻՆ ԱԶԳԻ

## Ի ՎԵՐԱՅ ՀԱՅՈՑ

## ԵՒ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՍՐԲՈՑՆ ՎԱՀԱՆԱՅ

### ՈՐԴՒՈՅ ԽՈՍՐՈՎՈՒ ԳՈՂԹԱՑ ՏԵԱՌՆ

---

ԱՀԱ մերկացաւ վաղակաւորն 'ի պատենից, զոր տեսանօղն յառաջագոյն գուշակեալ ողբայր զբարկութիւն տեառն 'ի վերայ Իսրայելին այն։ Զարթեաւ ազգն Իսմայելի, յանխնայ վանել զազգն Հայոց՝ 'ի սով, 'ի սուր և 'ի գերութիւն, աւերել և քանդել զաշխարհն Հայոց, և զվայելուչ տեղիս և զքաղաքս յինքեան ըմբռնել. զազատութիւն և զտէրութիւն Նախարա-

րացն պէսպէս պղետիւք խորհեցան քանդել. և զպայծառութիւն լուսաւոր կարգաց եկեղեցւոյ լուսազարդեալ սպասիւք և քահանայական խորհրդածութեամբ՝ համդերձ պաշտօնէիւք չիջուցանէին: Եւ ըղձրութիւն որ փոխանակ գլխաւորին չնորհեցաւ մեզ, զուարձանալ 'ի նմա սաղմոսիւք և օրհնութեամբ՝ երգել տեառն, և պատմել զանօրէնութիւնն Քրիստոսի, որ կենաց փայտն սուրբ խաչն պաղպաջերեւաց 'ի մէջ զՔրիստոս Աստուած փըրկիչ աշխարհի. զայս խափանել ջանային, և զփառաբանութիւն անուանն Քրիստոսի: Եւ տէրութիւն ողբոյն Երեմիայի երեւեալ լինէր, թէպէտ և ոչ ոք էր որ հոգւոյն Երեմիայի երգէր զողբս ըստ իւրաքանչիւր վտանգից՝ որ եհաս Հայոց:

Եւ եղեւ 'ի ժամանակս Տաճկաց բռնակալութեան, յուսթսուն և եւթն ամի ունելութեան իւրեանց, Աբդլմէլէք որդի Մրուանայ՝ դաւաճանութեամբ առաքէ և երդմնական խաղաղութեամբ, զի դիւրաւ

ըմբռնեսցէ զզօրավարս և զզօրս Հայաստանեայ, և սպառսպուռ մահուամբ վճարեսցէ, և յաղթեսցէ քաջաց և յաղթող նահատակացն Հայոց, և ջնջել և 'ի միջոյ 'ի բաց բառնալ, և ունել զաշխարհն առանց կասկածանաց: Այս այնուհետեւ դեսպան առաքէր հրովարտակօք, զի զօրավարսն Հայոց ժողովեսցեն 'ի մի վայր, և մտցեն 'ի դիւանն արքունի, և ընկալցին իւրաքանչիւր ըստ մեծութեան և ըստ տէրութեան զիշխանութիւն և ըզպատիւ հանդերձ զօրօք իւրեանց: Եւ 'ի համբաւ ստութեան և խաբէութեանն պատրեալք՝ ժողովեցան 'ի քաղաքն Նախճաւան որսացեալք նենգութեամբ 'ի կորուստ դառն մահու: Եւ 'ի զինուորական զինուցն ունայնս առնէին, և յաղօթարան ժողովէին 'ի տուն տեառն, որպէս զի երդումն արասցեն կալ հաստատուն 'ի միամտութեան բըռնակալին տէրութեանն: Եւ անդէն զդրունսն բազմութեան զօրացն պիղծ սպանողացն զզինունսն 26

տարաձայնեսցուք 'ի նմանէ արդե_լուծին , նաև աղխտով ամբաստանութեա_նեբին · և տալ հրամ զ յարքա տանն Աստուծոյ լուսաւորեցին , և զտունն ա_ղօթիցն դերբեղման յորինեցին · և դեհեան հրոյն ունէր զբաղեցնա_կան բոցոյն նմանութիւն՝ վերամ_բարձեալ հրոյն և ծխոյն · և զնոյն երգեցին զօրհնութիւն մինչեւ 'ի նուաղել ոգւոցն յանկուծանելի բանդին ։ Եւ այսպէս առ հասարակ ապաւեցան բազմութիւն նախարա_րացն Հայոց 'ի դաւաճանողացն ան_ողորմից ։

Աւանդ զնոցա այրումն 'ի միասին հրով · որ լեալք բերէին զլուր հա_ռաչանացն , հայր առ որդի՝ և որդի առ հայր , եղբայր առ եղբայր՝ և մերձաւոր առ մերձաւոր · բայց ոչ կակղացուցանէր զսիրտ անօրէն ապանողացն ։ Եւ նոքա այնպէս ապաւեցան 'ի գոհութիւն և 'ի փա_ռաբանութիւն ամենասուրբ Երրոր_դութեանն · բայց ոչ է Երեմիա մերձ՝ որ ողբէսս անցիցն ողբոց պատմեսցէ լսողացն ։ Ցորժամ լսա

կամաց իւրեանց զըստաւեցաւ գործն , զգլուխն հատին՝ և զփայտէ կախեցին , և զգլուխն 'ի տես վեհագունին առաքեցին . և ինքեանք սփռեցան ընդ աշխարհն ամենայն ժողովել զաւռ և զաւար ապանելոցն , և զընտանիս նոցա տարան 'ի Նախիճաւան քաղաք : Եւ լինէր այս 'ի մեծի զատկի տօնին : Եւ զփափկասունս և զհովասունս յարգելանս բանդից արկանէին . 'ի ջերմ յամառային ժամանակս , և բազումք մեռանէին 'ի ջերմութենէն . և զմնացեալսն վարէին 'ի գերութիւն յաշնանային ժամանակս : Եւ հասեալք 'ի Դամասկոս՝ զորդիս նախարարացն և զընտանիս նոցա յարքունիս տանէին . և զմանկունս նոցա 'ի դպրոց , և զայլս ըստ պատահման առնէին :

Եւ 'ի մանկանցն յայնցանէ մանուկ մի փոքրիկ ամաց իբրեւ չորից՝ որում անուն էր Վահան , որդի Խոսրովու Գողթան տեառն . բարեշնորհ երեւեալ և սիրեցեալ 'ի նոցանէն , կամեցեալ դարձուցանել 'ի դենն իւրեանց 'ի տղայական

հասակին, տուեալ հոգ տանելով նմա ուսմանն իւրեանց. և խնամանայր ուսմանց և ճարտարութեանց, թղթոյ և առասպելախօս բանաւորութեանց. թէպէտ և ընճանապարհն արդարութեան անդիտայր 'ի տղայական հասակին, մինչև լինել նմա գիտնագոյն և գրասպասեա, և ամենայն խորհրդոց հմուտ, և սիրելի յարքունի տանն՝ և մեծ յոյժ:

Իսկ յետ վախճանելոյ ամբարշտին Աբդլմելքի, և ժամանակին անցանելոյ՝ տեսեալ զիշխանութիւնն Վլիթ, որ ոչ նմանեաց չարութեան հօրն. և տեղեկացեալ վասն գերեայն Հայոց 'ի հօրէն՝ դառնայր յողորմութիւն 'ի վերին խնամոցն, և դարձուցանէր զգերեալսն յիւրաքանչիւր տեղիս. և տանէր իրաւունս և արդարութիւն որ ընդ իւրով իշխանութեանց, և զիւր զհայրենեացն ծանուցանէր զաւերութիւն: Վահան կոչեցեալն Վահար՝ երթեալ աղաչէր երթալ 'ի բնիկ աշխարհն իւր, որպէս կամք էր ա-

սել խնոյ բանիցս , շարժեալ 'ի հոգ-
ւոյն եռացմանն՝ դառնել զՃշմարիտ
հաւատոյն որ 'ի Քրիստոս , զոր կա-
բոյս ազգայական հաւատոյս յանօրի-
նացն ։ Եւ ապաշէր զբաղումս 'ի մե-
ծամեծաց սիրելեացն . և օժանդակս
առեալ 'ի խնդիրն՝ հաւանեցուցա-
նէր զայլս այսպիսի իրօք , երթալ և
առնուլ զժառանգութիւնն իւր 'ի
քոյր իւրաւ ժամանակի , և կարգել
գործակալս և դառնալ 'ի քո ակ-
բութիւնդ ։ Իսկ նա թէպէտ և ա-
պաշաւէր զՎահան վասն սխտա-
նութեանն և ազնուականութեանն
և լաւ բարուցն , սակայն վասն իրա-
ւանցն զոր արար՝ և արդար դատաս-
տանին , արձակէր զՎահան հրո-
վարտակաւ զի զինքն աշխարհն ըղ-
ձղթան տացէ , և մի ոք ընդդի-
մասցի նմա ։ Եւ պատուէր առնու-
փութով դառնալ անդրէն . նաև
մեծամեծ պարգևօս խոստանայր
ալ յորժամ դարձցէ յարքունիս .
և շքով և պատուով և արամբք
յղարկեալ լինէր յաշխարհն Հայոց ։
Եւ եկեալ հասանէր 'ի բնիկ գա-

ւսան իւր 'ի Գողթան ։ Որք ժողո-
վեցան ընտանիք աշխարհին և իշխ-
գային ընդ ընկել աւերութիւն . և
յիշեցուցանէին զաւաքին ազգան
որ անցին ընդ աշխարհն , և զնորա
'ի ազատութենէ յետադարձութեյի-
չէին և յորդւոց հանելին ։ Եւ նո-
րա յարտասուս եղեալ ըստ զա-
նազես վասն կորստեան անձին իւ-
րոյ , և զամենեսեան շարժեր յար-
տասուս զժողովուրդն որ առ նմին .
և նոյնժամայն յարուցեալ կայր յա-
ղօթս և ասէր .

Հայր երկնաւոր , մեղայ յերկինս
և առաջի քո , որ առաքեցեր զմիա-
ծին որդիդ քո 'ի փրկութիւն աշ-
խարհի դարձուցանել զմոլորեալս
'ի գիտութիւն ճշմարտութեան , և
ճանաչել զմի աստուածութիւնդ
Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ , և
երկրպագել և օրհնել զամենասուրբ
զԵրրորդութիւնդ , և միաւել յա-
նուն քո սուրբ , և իմ' այսմ' արժա-
նաւորել , զի յանօրինաց ընկերեցայ
'ի խորս անօրէնութեան յանկա-
տար հասանել , և յարան յիս մեղք

յետադարձութիւն անգիտութեանն , որպէս դու իսկ գիտես՝ որ 'ի մտա-տանուս զամենայն գործս որդւոց մարդկան ։ Եւ արդ մեղուցեալս 'ի խորոց սրտից կարդամք առ քեզ , ողորմեաց ինձ Աստուած , ողոր-մեաց ինձ տէր , ողորմեաց ինձ և ըն-կալ զիս գթութեամբ քո ։ և տուր առ իս զգութ մարդասէր շնորհաց քոց , որով զառնան մեղաւորք յա-պաշխարութիւն փառաւորելով քաղ-ցրութեան քո ։ որ տաս երկայն-մտութիւն տարակուսելոց՝ և կեանս այնոցիկ որ մաշեալ են սրտիւք ։ և ոչ ցանկ բարկանաս , և ոչ յաւի-տեան պահես ոխս ըստ մարդկան մեղաց որ կարդան առ քեզ տէր Աստուած ։ Նմանեցայ ես անառակ որդւոյն , և մերժեցայ ես 'ի հայրե-նի ծոցոյ աւազանին , որ լուսաւո-րեաց զիս վերստին ծննդեամբ ա-ւազանին 'ի նորոգութիւն հոգւոց , կեալ ըստ Աստուծոյ մինչեւ 'ի չափ հասակի կատարմանն Քրիստոսի ։ Եւ այժմ՝ դարձայ առ հայրդ գը-թած ։ յիշեա զանկատար հասակն

իմ՝ յորս մեղայ անգիտութեամբ, և
զմեղս տգիտութեան իմոյ մի յիշեր·
այլ յիշեա զիս տէր ըստ ողորմու-
թեան քում և ըստ քաղցրութեան·
և արա զիս իբրեւ զմի 'ի վարձկա-
նաց քոց· և ազատեա զիս 'ի կե-
րակրոց անմաքուր խոզենիցն· լուա
և սրբեա ապաշխարութեան ար-
տասուօք, զի մաքրեալ 'ի մեղաց 'ի
հաճոյս կամաց քոց կացից յայսմ
աշխարհիս, և անարատ վարուք և
ուղղափառ հաւատով՝ անփոփոխ
մտօք փառաւորելով զանփոփոխելի
տէրութիւնդ զՀայր և զՈրդի և ըզ-
սուրբ Հոգին, այժմ և միշտ և յա-
ւիտեանս յաւիտենից· ամէն:

Եւ ապա յետ այնորիկ զլուսա-
ւոր կարգաց բուռն հարկանէր հա-
տատուն հաւատովք, պահօք և աղօ-
թիւք, տքնութեամբ և արտասուօք
վերստին լուացմամբ, և զարտասուսն
առնէր հանապազ երկրորդ աւա-
զան զոր անգիտութեամբն մեղաւ·
և բազմաց տեսեալ փառաւոր առ-
նէին զԱստուած 'ի վերայ եղելոցն
ողորմութեանցն Աստուծոյ որ ցու-
ցաւ յայրին:

Յայնժամ իբրեւ տեսին զողջա-
խոհութիւն Վահանայ՝ և զպնդու-
թեանն հաւատոյն որ 'ի Քրիստոս,
որ իւրքն էին խորհեցան 'ի մարս
կենցաղոյս մուծանել զՎահան, զի
մնասցէ որդի նորին ժառանգորդ-
տէրութեանն 'ի Գողթան : Իսկ նա
ոչ առնոյր յանձն ; և բռնադատե-
ցին զնա մեծաւ թախանձանօք, մին-
չեւ հաւանեցուցանէին կամաց իւ-
րեանց :

Ընդ այն ժամանակս վախճանի
ամիրապետն որ արձակեաց զնա
յիւրային աշխարհն, և պատուէր
ետ դառնալ առ նա. Թէպէտ և զեր-
ծանէր 'ի նորա դաշանցն, սակայն
'ի կասկածի կայր, որք զիշխանու-
թիւն աշխարհին ունէին Տաճիկք,
զի մի գուշակեսցէ ոք վասն նորա
դառնալոյն 'ի քրիստոնէութիւն. որ
եղեւ իսկ, զի եհաս համբաւն 'ի
լսելիս ատելեացն Քրիստոսի. և
լուեալ զայն՝ խորհեցաւ գնալ յաշ-
խարհն Յունաց հանդերձ ընտա-
նեօք իւրովք. և հասեալ 'ի Վայոց
ձոր՝ յոյժ թախանձեալ 'ի կնոջէն

աղաչէր սրտամբ՝ ուր երթալոց էր · և նա սրտմտեաց նմա ։ Իսկ նա աղատարեալ եղբարցն իւրոց որք էին 'ի Սիւնեաց նախարարութեանցն , որք եկեալ փութով արգելուին յոյժ , և Թախանձեալ զնա ամենայն ընտանեօքն իւրովք , և բռնադատեալ 'ի նոցանէ՝ հաւանեցաւ 'ի հարկէ , որպէս և կամեցան ։ Եւ փորձութիւն հայէր յայրն 'ի փորձողէն , և քննութիւն կամացն երևելապէս յայտնելով զառն փառաւորութիւնն , որպէս զի որոշեսցի ակըն զոր ունէր յինքեան առ Աստուած՝ եթէ աշխարհի ակը՝ և որ 'ի նմա յարմարին ցանկութիւնք ։

Եւ յայնմ հետէ ոչ լինէր նմա հանգիստ և դադար ուրեք · այլ ըղկինն Թողեալ առ ընտանիս իւր , եառ զինքն Աստուծոյ և կամաց նորա ։ Եւ զոմանս առեալ ընդ իւր 'ի զինուորաց , այսր անդր աներեւութաբար երկիւղիւն Աստուծոյ շըրջէր , 'ի կասկածանաց ատելեացն Քրիստոսի որք որսային զնա 'ի կորուստ ։ Զի ստուգեցաւ ամիրապե-

ոին թէ դարձաւ 'ի քրիստոսական հաւատսն, և արհամարհեաց զդենն իւրեանց. և նորին հրամանաւ յու- ղեցին զնա։ Իսկ նա հալածական լի- նէր փասն արդարութեան. և ոչ ոք իշխէր մատուցանել զնա առ ինքն, և վտանէր ամենայն ինչք նորա. և հերքեալ՝ որք ընդ նմա էին, 'ի բաց կային 'ի նմանէ՝ և զնա միայն թո- ղին։ Եւ նորա ապաւինեալ առ Աս- տուած՝ ոչ անյոյս լինէր յապա- գայիցն, այլ գոհանայր զնմանէ 'ի փորձութիւնսն. և այլակերպէր զինքն ձևով աղքատութեան. և երթայր հանդիպէր հայրապետին 'ի Վաղարշապատ քաղաքի, և ծա- նուցանէր նմա զփորձանսն զոր կրէր 'ի պատերազմասէր դիւէն. և հրամանաւ առնու երթալ յանապատ, և պահօք և աղօթիւք և նոցին ձգ- նութեամբ ապատիլ 'ի մեղաց, և մերձենալ անդ և պաշտել զԱս- տուած։ Եւ նորա ունկնդիր եղեալ երթայ 'ի մենաւորանոցս ուրեմն 'ի Շիրակ գաւառ, և մտեալ ճգնէր անդ առաւել քան զառաւել, և ա-

ւազան զարտասուս առնէր , և ամենայն պնդութեամբ նահատակէր 'ի վերայ առաքինութեան : Եւ անցուցանէր իբրեւ ամիսս վեց պնդութեամբ կրօնիւք , և զարմացուցանէր զամենեսեան :

Յանժամ դարձեալ յարուցանէր պատերազմ փորձիչն , և աչ արկանէր կրօնաւորացն , և յայտնէին տիկնոջ գաւառին . և նա ասէ . Երթիցէ 'ի բաց , գուցէ մեզ և ձեզ պատուհաս հասցէ յարքունուստ վասն նորա : Եւ նորա լուեալ զայն՝ յարուցեալ գնաց յանապատ ուրեմն անյայտ . և անդ առաւել քան զառաջինն ճգնէր ամ մի միով հանդերձիւ և բոկոտն , և զմոխիր որպէս հաց ուտէր և զըմպելիս արտասուօք խառնէր ըստ ասացելոյ սաղմոսին , և խրատու առաքելոյն՝ թէ Լաւ է շնորհօք հաստատել զսիրտս , քան թէ կերակրօք , զի ոչ ինչ օգտեցան որք այնպէս գնացին : Եւ ընթերցասէր և ունկնդիր լինէր գրոց սըրբոց , և խելամտէր և քննէր և ուսանէր զհին և զնոր կտակարանս , և

տեղեկանայր 'ի Նոյանէ զհաճութիւն Աստուծոյ կամացն , և հարց ուսուցանողաց՝ էր հպատակ և հլու . և խոկայր զայս 'ի տուէ և 'ի գիշերի . և ոչ միով իւիք զանց առնէր զպատուիրանին պահպանութեամբ վասն փրկութեան անձին իւրոյ : Եւ այնուհետեւ զմարմնական կարիս և զհանգիստ քամահէր . արտաքրոյ մարմնոյ և աշխարհի խորհէր , և ցանկայր վկայութեան և մկրտութեան ասելով զսաղմոսս զայս . Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց , այնպէս փափագէ անձն իմ առ քեզ Աստուած :

Եւ յետ այսորիկ դէմ եդեալ գնալ 'ի դուռն արքունի , և յայտնապէս խոստովան լինել զքրիստոնէութիւնն , և զիւր անգիտութեան մեղսն որ 'ի Նոյանէն պարտեցաւ , զի 'ի Նոյանէ մեռցի և կամ համարձակութիւն առցէ՝ ունել զքրիստոնէութեան զկարգն և զհաւատսն զոր ծանեաւ և դարձաւ : Եւ հրաժարեալ՝ ցանկայր 'ի ճգնաւորացն աղօթս առնել վասն նորա : Եւ հա_

սեալ 'ի վանսն Մաքենոցաց, ծանուցանէ զամենայն հօրն սուրբութեամբ, և վասն Ճանապարհին՝ և ցանկութեանն. և ընդունէր 'ի նմանէ յորդորական խրատս՝ և քաջալերութիւնս որ 'ի Քրիստոս, որում անուն էր առաջնորդին Սողոմմոն. և հաղորդէր մարմնոյ և արեան տեառն 'ի տօնի սուրբ խաչին: Նաև տեսիլ իմն սքանչելի ցուցաւ՝ լոյս անճառելի երևեալ, և ձայն լսելի եղև որ ասէր. Քաջալերեաց Վահան, զի թողան քեզ անգիտութեան մեղքն, և ցանկութիւն քո կատարեցաւ վկայութեամբ, և ըղխոստացեալ պարգևսն ընկալցիս 'ի Քրիստոսէ: Եւ ամենից զլոյսն տեսեալ ըստ առաքելոյ տեսութեան, անպատմելի ցուցաւ անհասութիւն տեսլեանն. և ամենեցուն փառաւորելով զԱստուած յուղարկեցին զնա մեծաւ սիրով և արտասուօք: Եւ եկեալ 'ի վանս Սոմի անուն, և առաջնորդի ուխտին՝ Յովհաննէս, և մեծաւ սիրով ընկալաւ զնա. և քաջալերեալ յորդորեաց զնա 'ի

բարւոք ճանապարհորդութեան իւրում, և վասն Աստուծոյ երթայր 'ի մահ, 'ի տեղին՝ ուր անգիտացաւ զՔրիստոս, զի ծանիցէ : Եւ հայրն փոխանակ իւր առաքէ զհետ նորա յեղբարցն տեսանել զվախճան խորհրդոյ նորա : Եւ յուղարկեալ անտի՝ եկին հասին 'ի սուրբ Երուշխաւորսն, 'ի վանսն Արծխեոյ 'ի Բզնունեաց գաւառին. և էր անուն ուխտի առաջնորդին Արտաւազդ, որ ընդ առաջ ելեալ եղբարցն՝ մեծաւ սիրով ընկալաւ զնա. և լուաւ 'ի նմանէ զամենայն ինչ որ պատահեցաւ նմա յանգիտութեանն, և զդարձն իւր, և զփորձանս, որ ինչ միանգամ կրեաց հալածանս ամս չորս, և 'ի հինգերորդ ամի՝ երթալն իւր 'ի կատարումն անձին իւրում: Որոյ զայն լուեալ հօրն և ուխտին՝ փառաւոր առնէին զԱստուած 'ի վերայ սքանչելեացն, և երանէին զբարիոք մտածութիւնն, և զվախճանն սուրբ որ յաղագս Աստուծոյ էր, զոր հանդերձեալ էր կատարել: Եւ այլովք բանիւք բազմօք

մխիթարէին զնա , և քաջալերէին յաստուածային գրոց , և յանձն արարեալ զնա տեառն՝ յուղարկեցին ողջունիւ և արտասուօք և աղօթիւք , և զմի ոմն յեղբարցն սպասաւորել նմա որչափ կամեսցի :

Եւ զբաղում օթեւանօք զանց արարեալ՝ գայ հասանէ 'ի քաղաքն Ուրհայ , երկրպագանել փրկչական պատկերին . և աղօթս արարեալ առ տէր՝ յանձն առնէր շնորհաց Հոգւոյն սրբոյ . գնայր զճանապարհն սաղմոսիւք և անդադար աղօթիւք , մինչեւ եկեալ հասեալ 'ի տեղի կատարմանն : Եւ որք զհետ նորա էին՝ ասէր կալ 'ի բացեայ զի մի ըմբռնեսցին : Ծանուցանէր զինքն դրան արքունի՝ թէ ով ոք իցէ նա . ասէր միանգամայն և զպատճառս գալստեան նորա յարքունիսն . և նոցա լուեալ սքանչացան : Եւ աղաչէր պատմել վասն նորա յարքունիսն՝ դպրապետին և մեծամեծացն . և եհաս բանն առ նոսա : Եւ տեսեալ ոմանց սքանչացան՝ թէ որպիսի՛ կերպարանս

նի աղքատութեամբ , յիշելով
առաջինն թէ ուպիսի ոք էր այրն
րեւելի և փառաւոր յարքունիսն .
ամարեցան այլազգ ինչ վասն նո_
րին հանդիպեալ իրաց : Սկսան
արցանել , թէ Զի՞ այդպէս ես . և
ահան զճշմարտութիւն իրացն
ոստովանէր , թէ Վասն Քրիստոսի
ամաւոր աղքատութիւն յանձն
ուի՝ արհամարհելով զանցաւոր
ծութիւնս , որ վասն իմ աղքա_
ացաւ՝ որ անէրն է և Աստուած Յի_
ուս Քրիստոս . և նորա ողորմու_
թեամբն սրբեցայ 'ի մեղաց , և մե_
ացոյց զանանց մեծութիւնն ա_
եամբ վկայութեան : Արդ աղա_
եմ զձեզ ծանուցանել զայս այս_
պէս ամիրապետին , զի եղիցի կա_
արումն աստացելոց 'ի նմանէ : Եւ
նոցա ափշեալ ընդ իրան , միանգա_
մայն և մոլորութիւն համարեալ
նորայն խաւարանքըն :

Իսկ իբրեւ ոչ գտանէր ելս իրացն
րանելին Վահան , ծանուցանել
ամիրապետին վասն որոյ երթեալն
էր , երթեալ անկանէր առաջի Ամ_

տածոյ և խնդրել հնարաւորութիւն իւրոյն . և զայս աղօթս մատուցանէր . Միածին որդի Աստուծոյ՝ որ մարմնացեալ ոչխարին հովիւ կոչեցար , և գտեալ զնա 'ի մերոյ ուսոց բարձեր , և տարածեալ զբազուկս քո առ քեզ ժողովեցեր ըզհեռացեալ ազգս մարդկան : Դու ես յոյս իմ՝ Քրիստոս . մի անօգնական թողուր զիս , այլ ընկալ զաղաչանս իմ՝, և լուր պաղատանաց իմ՝ քո սուրբ արեամբդ և կենդանարար մարմնովդ , որ մանանայդ ես անմահութեան յերկնից իջեալ՝ և աշխարհի կեանս շնորհես . որ կամաւ Հօր և Հոգւոյդ սրբոյ առաջնորդես 'ի կեանս քոյոց երկրպագուաց . առաջնորդեա ինձ՝ զի լուսով քո տեսից զքեզ . և տաց փառս անմասն սուրբ Երրորդութեանդ այժմ և յաւիտեանս , ամէն :

Եւ յետ աղօթիցն երթայր առ գանձապետն , և ծանուցանէր նմա . միանգամայն և զբոլոր գիրսն սուդեալ՝ զգալստեան պատճառն յուցանելով թագաւորին : Իսկ ըն-

թերցաւ, զարմանայր ընդ գիրսն և ընդ բանսն։

Եւ հրաման ած եւ առաջի, և հայեցեալ 'ի նա հեշտալի բանիւ՝ ասէ. Ընդէ՞ր այդքան կերպարանօք երեւիս Վահան։ Պատասխանի ետ Վահան. Իմ՛ տէրն զանձն ուսոյ-ցուցից վասն իմ՛ 'ի կերպարանս աղ-քատութեան, և եղեալ հնազանդ մանկութեան. և ես յայտնեմ ոչ վերջանամ՝ Ասէ բանաւորն. Մոլե-գնեալ ես 'ի գիւաց։ Ասէ Վահան. այն՝ որ 'ի ձեր ուսմանցն յանցի-տութեան ընթանեցայ, հալածեցաւ-յինէն. վասն զի խաւար 'ի լուսոյ փախչի։ Ասէ բանաւորն. Ասեն ձեր խմաստունքն, թէ գիւացն 'ի բար-ւոյն 'ի վայր անկեալ՝ այլոց չարք եղեն. և ստոյգ է, զի ձեզ եղեն չարք. առա՝ և ուր յուսացեալն էք. արդ մի մոլորիր։ Ապա հրամայեաց բերել գանձս ոսկւոյ և արծաթոյ և հանդերձս ազնիւս, և ասէ. Առ-զայդ՝ և ծառայս, և աղախինս, և ձիս, և ջորիս, և իշխանութիւն քեզ տաց, թէպէտ առա թէպէտ 'ի

Գողթան ժառանգաւոր քո իշխանութիւնն. և ած զմտաւ զպատգամաւորն մեր զՄահմէտ, որ ետ մեզ զայս իշխանութիւն մեծութեան, և անդ զդրախտին փափկութիւնն։

Աղէ երանելին. Յառաջադոյն լըւեալ է իմ զքո բազմախօսս ճարտարխմաց բանս, և զխորամանգութիւնս՝ որով զբազումս որսայեր 'ի Ճշմարտութենէն 'ի վիհ կորստեան, գեհենակից քեզ առնելով զոմանս աչարկու ձայնիւ, և զոմանս ողքական բանիւք, զոմանս կարասեաւ, և զոմանս իշխանութեամբ պատրեալ խաբեցեր յետադարձութեամբ. զոր տալոց ես վրէժս յաւիտենական գեհենին այրմամբ։ Բայց ծառայիս Աստուծոյ ոչ կարես յաղթել չարաչնար մեքենայիւք քովք, զի պարապեալ եմ երկեւղին Աստուծոյ, գիտութեամբ ամրացեալ հաւատով և յուսով։ Տեղեակ և հմուտ եմ աւետարանին Քրիստոսի, նա եւս առաւել քան զձեզ հմուտ եմ ձերում առասպելախօսութեանդ. վասն զի . . . .

պետին ձեռում սուտ վկայէք պատգամաւոր լինել, որ ոչ ոք վկայէ 'ի մարգարէից և ոչ յայլ ազգաց, բայց գուք. և ոչ այլ ոք, զի բազումք են որ ոչ վկայեն. այլ Քրիստոսի Աստուծոյ մերոյ ամենայն ազգ: Բայց եթէ խոնարհիլ կամիս 'ի բանս իմ, տուր ինձ համարձակ ունել զքրիստոնէութիւնս, և նոյն կարգօք վարիլ 'ի կենցաղումս. և ոչ իմիք ցանկամ խոստմանց քոց անցաւորաց: Եւ եթէ կամք են քեզ՝ և զգաւառն իմ առցես, և ըստ արժանեաց հատուցմունք 'ի թագաւորէն անմահէ, որոց 'ի կեանս՝ և որոց 'ի մահ: Յայնժամ բարկացեալ թագաւորն հրամայեաց տանել 'ի բանդ և պնդել 'ի կոճեղս. իսկ նա մեծաւ ուրախութեամբ երթայր 'ի բանդն, և գոհութիւն մատուցանէր Աստուծոյ: Այլա արձակէր յաշխարհն հայոց՝ որ զիշխանութիւն աշխարհին ունէր, տեղեկանալ վասն առնն զի տուգիւ գխասցէ:

Եւ զայս ասուրս անփոյթ արա-

րեալ 'ի բանդին վասն մարմնաւոր պիտոյից, այլ զցերեկ օրհնէր զԱստուած սաղմոսիւք և խնդրուածովք, և զօրանայր 'ի կապանս 'ի շնորհաց Հոգւոյն սրբոյ: Իսկ գատաւորին ոչ դադարէր հանապազ յղել 'ի բանդն յիւրեանց տաճապելախօս իմաստնոցն՝ խօսել ընդ նմա 'ի բաց կալ 'ի Քրիստոսէ: Եւ դառնայքն 'ի նմանէ պարտեալ և լի ամօթով, և զարմացմամբ զպարտութիւն խոստովանէին, զի ոչ կարէին զդէմ ունել այնչափ իմաստութեան և կորովի առնն. զոր իբրև պատմէին բռնաւորին զարմանայր, և պատուէր տայր մի ումեք գիտել զայն: Այսպէս եկեալ 'ի բանդն ճշմարտասէր Յակովբիկ մի քաջալերէր զերանելին և ասէր. Եթէ առցես զվերջին թոշակն զմարմին և զարիւն Քրիստոսի 'ի փրկութիւն քեզ, զի իմումս հանդիպեցայր քահանայութեան: Եւ նա ասէ. Իմով արեամբս մկրտեցայց, և ելից յաշխարհէ 'ի փառս Աստուծոյ: Եւ 'ի գալ ողոգոմենին մեծի տօնին՝ որ է

օրհնեալ օր , օրհնէր զԱստուած 'ի վերայ սքանչելեաց աւուրն խորհըրդածութեան : Եւ ասէ ցբանդապետն . Խաղաղութեամբ թողից ըզքեզ յետ իմոյ ելանելոյ յաշխարհէս , զի բարեաւ ընկալար զիս : Եւ զարմացեալ այրն ասէ . Զի՞նչ դիւրութիւն ցուցի քեզ . զի դու ասեցեր զդիւրութիւն մարմնոյ՝ և սիրեցեր զվտանգ , որպէս արդարեւ յուսացեալ 'ի տէր . վասն զի յԱստուծոյ իսկ երեւէր շնորհ լուսաւոր քում անձինդ . և հրաժարման իմն ցուցանես բան՝ զոր չէ իմ լըւեալ : Եւ սուրբն ասէ . Հատուցանօղն երախտեաց հատուսցէ քեզ . այլ ես վաղիւն փոխիմ սրով առ որ անձկացեալն եմ :

Այս վաղիւն եհաս հրովարտակն 'ի հիւսւսային իշխանէն՝ որ սաստկեաց զառն զիրան , թէ յիմաստնոց և բարետոհմիկ , և ոչ օտար ոք . և յաղագս այնորիկ եկն՝ զի առցէ իշխանութիւն և համարձակութիւն յիւր ընիկ աշխարհն , և կամ վասն Քրիստոսի մեռանել : Եւ հիանայր

բռնաւորն · այսպէս հրամայեաց ա-
ծել, և ասէ · Զի՞նչ ունիս ասել,
թէ և արդ ոչ զգաստացար 'ի յա-
մառութենէդ ։ Ասէ երանելին ·
Ճշմարտութիւն մի է, և ոչ ունի
բանս սուտութեան · ես զգաստացայ
յաստուածային գրոց, և ծանեայ
զմոլորութիւնդ ձեր, որով զիս որ-
սայցէք 'ի կորուստ յանդգէտ աղայու-
թեանն ։ Բայց արդ ոչ այնպէս ·
զի ոչ փառք և ոչ պատիւ, ոչ պար-
գեւք՝ և ոչ մեծութիւն, նաեւ ոչ
տանջանք, ոչ բանդ՝ և ոչ կա-
պանք, ոչ հուր՝ և ոչ սուր, և ոչ
ազգի ազգի տանջանք կարէ մեկնել
զիս 'ի սիրոյն Քրիստոսի · որ ոչ յի-
շեաց զմեղս մանկութեան իմոյ, այլ
յիշեաց զիս ըստ ողորմութեան իւ-
րոյ և ըստ քաղցրութեան դառնալ
'ի խաւարէ 'ի լոյս, յանգիտութե-
նէ յաստուածգիտութիւն ։ Եւ
զի՞նչ հատուցից տեառն ըստ ամե-
նայն ողորմութեան իւրոյ, այլ ըզ
բաժակ մահու ընկալայց և զանուն
տեառն կարդացից և փառաւորեցից
առաջի ամենայն ատելեաց նորա ։

Յայնժամ բարկացեալ բռնաւորն հրամայեաց արագ լուծանել 'ի կենացս. և որ ընդ նմա մեծամեծք էին՝ աղաղակէին անյապաղ զաս լինել, զի մի հայհոյեսցի 'ի նմանէ օրէնք . . . . . . . նոցա. քանզի հմուտ էր, և ոչ կարէին ընդդէմ ունել զօրութեան բանիցն: Ապա հրամայէր դահճապետին տանել 'ի տեղի սպանմանն, և անդ արկանել՝ (Թերեւս դարձցի, իսկ եթէ ոչ հաւանեսցի՝ մեռցի: Երթայր երանելին 'ի մահ մեծաւ ուրախութեամբ սաղմոսելով. Առ քեզ տէր համբարձի զաչս իմ՝ որ բնակեալդ ես 'ի յերկինս: Եւ բազմութիւն ժողովրդոցն զկնի երթային յամենայն ազգաց՝ տեսանել զնահատակութիւն նորա:

Եւ իբրեւ եհաս 'ի տեղի կատարմանն՝ զձեռս իւր յերկինս համբարձեալ ասէր. Գոհանամ զքէն տէր՝ որ զհանապազորդ զօրութեանս իմ և զհաւաչանս ոչ անտես արարեր, այլ արժանի արարեր մեռանել վասն անուանդ քո մեծի և ահաւո֊

րի ։ Արդ յիշեա զիս տէր մարդասիրութեամբ քո և ողորմեա ինձ, և արժանի արա ընդ սիրելիս քո յանվախճան կեանդ, և արա յամօթ զբռնաւորն պերճացեալ ինքեան գործակցաւն ։ Եւ զմանկունս եկեղեցւոյ քո պահեա հաստատուն և անշարժ 'ի վերայ վիմին հաւատաութեան, ըստ երկնաւոր կոչմանդ ճանապարհորդելով 'ի հանդերձեալսդ ընդ որդիս լուսոյ՝ փառաւորելով զամենասուրբ զԵրրորդութիւնդ . ընդ որս և ես արժանի եղէց օրհնել զքեզ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ։ Եւ դահճապեան մերկացուցեալ զսուրն ասէ . Ահա եկն եհաս քեզ օր դանութեան և մահու, և դարձեալ կենաց՝ եթէ կամիս ։ Ասէ սուրբն. Ընտրեցի զմահ վասն Քրիստոսի քան զկեանս անցաւորս ։ Եւ անդէն վաղվաղակի հատին զպարանոցն ։

Այսպէս կատարեցաւ սուրբն Վահան, որ օր քսան և եւթն էր մարգաց 27, յերկուշաբաթի յօր

զատկին յիններորդ ժամու : Եւ ժողովն տեսեալ օրհնէին զԱստուած , և 'ի հաւատացելոցն ոչ ոք իշխէր մերձենալ 'ի նշխարս սրբոյն . և քարոզն աղաղակէր զսպառնալիս բռնաւորին : Այս 'ի գիշերին յայնմիկ տեսիլ իմն ահաւոր զարհուրեցուցանէր զբռնաւորն . և 'ի վաղիւանդր քարոզէր ներքինապետն , եթէ համարձակ լիցի քրիստոնէից տանել զմարմինն Վահանայ : Եւ անդէն փաղփաղակի ժողովէր բազմութիւն քրիստոնէից արանց և կանանց , և հաւաքէին զկաթուածս արեանն ըստ իւրաքանչիւր կարի : Եւ անդ հաշիւ լեալ վասն սրբոյ վկային՝ Հոռոմի , Յակոբիկի , և Նեստորի , ապա 'ի շնորհացն Քրիստոսի խաղաղանայր . 'ի սուրբ արենէն և 'ի հանդերձէ վկային առեալ մասն ինչ տային օրհնութիւն Աստուծոյ , և դնէին 'ի պահեստի ուրեմն և մնային տեսչութեանն Աստուծոյ : Իսկ այր մին Թէոփիլոս անուն Հոռոմ՝ 'ի զօրացն արքունի քրիստոնեայ , գողացաւ զնշխարս

որոյն 'ի գիշերի՝ արտաքոյ քաղաքի , և տարեալ դնէր յիւրում՝ սենեկին ։ Եւ 'ի նմին գիշերի յայտնեցաւ եպիսկոպոսի քաղաքին զոր ինչ արար Թէոփիլոս . և յայտնի եղև ամենեցուն որպէս պատահեաց եպիսկոպոսն զանօսին ։ Եւ ժողովեցան ամենեքեան 'ի հանգիստն տեսանել թէ որպէս արասցեն . և միաբանեալ հաւատացեալքն խորհեցան շինել մկրտարան որոյն Վահանայ ։ Իսկ հիւանդ ունն մերձ 'ի մահ աղաչէր մերձեցուցանել զինքն 'ի նշխարան . և իբրև մերձ եղև՝ տաճարին ընծայեցաւ 'ի ցաւոցն . և յարուցեալ օրհնէր զԱստուած , և դնէր 'ի տեղի իւր ։ Եւ ամենեցուն տեսեալ փառաւոր առնէին զԱստուած . և առաւել ևս յորդորէին շինել զհանգստարան որոյն աննապարդ գեղեցկութեամբ ։

Եւ այր ունն 'ի բարձրաբերձ որմոյն գլթեալ 'ի վայր անկանէր յերկիր , որ ամենեքեան ձիչ բարձեալ ասէին . եթէ մեռաւ . իսկ նորա ողջ առանց վնասու ապրեալ լինէր

և յայն կայեալ ասէր՝ Կենդանի եմ. և ոչ ինչ վնասեցայ, ասէր. Զի տեսի յայտնապէս զկերպն Աստուածոյ զՎահան, զի 'ի գթելն խնամ բուռն հարեալ իջոյց զիս 'ի խոնարհ. և տեսեալ և լուեալ զբան չելին 'ի վերայ սքանչելեաց՝ փառաւորէին զԱստուած: Եւ շինեցին վկայարան, և մեծապարգ սպասուք զարդարեցին զեկեղեցին, և 'ի հանդիստ փոխեցին ըստ օրինի նահատակաց սրբոց վկայիցն. յորում տեղւոջ բազում հիւանդք 'ի պէսպէս ցաւոց զառողջութիւն ընդունէին. և օրհնեցին զԱստուած 'ի ձեռն սրբոյ վկային Վահանայ:

Եւ վկայեաց սուրբն Վահան յՌուծափ քաղաքի 'ի ՃՁԶ. թուականութեանն Հայոց, բարի խոստովանութեամբ, 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն:



# ՏԱՂ

## Ի ՍՈՒՐԲ

## ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ

Յաղթող զօրութեամբ վերնականաւ լցեալ,
Քաջն 'ի զօրականս երանելին Վահան։
Որդւոյն Աստուծոյ ընտրեալ հաւատարիմ,
Մեծ նիզակաւոր երանելին Վահան։
Վառեալ 'ի հոգւոյն 'ի սէր անմահ Բանին,
Մեծ առաքինին երանելին Վահան։
Արարչին էից ըստոյգ կամակատար,
Ճշմարտահաւատ երանելին Վահան։
Նախնոյն նմանեալ անդրդուելի յուսով,
Հաստատուն սիրով երանելին Վահան։
Էական սիրով պայծառացեալ պատկեր,
Գեղ վայելչութեան երանելին Վահան։
Ի հանդէս տօնի քո սուրբ յիշատակի,
Լեր միշտ բարեխօս առ տէր Աստուածն երկնի 28։

# ԱՅԼ ՏԱՂ

Շնորհաց Հոգւոյն ընդունարան
  Քաջ զօրական, սուրբըդ Վահան.
  Հարար սիրով աստուածական
  Սուրբ զօրապետ, Գողթան իշխան։
Վարժ եւ հմուտ աստուածարան,
  Լցեալ Հոգւով սուրբըդ Վահան,
  Ժուժկալ 'ի կրօն քրիստոնէական,
  Պայծառահաւատ ուղղադաւան.
Յազգէս Հայոց ուղղափառաց՝
  Ջահ վառեցար 'ի մէջ ազգաց,
  Մէջ Ասորւոց եւ 'ի Յունաց,
  Նահատակեալ յանօրինաց։
Մահմէտական . . . . . . . . . . . աց
  Ոչ երկուցեալ 'ի տանջանաց,
  Գըլխատեցար յանօրինաց
  Դաւանելով զՔրիստոս Աստուած.
Ուստի պայծառ լոյսըն ծագեաց
  Ի եղոյց արժան զքեզ պըսակաց։
  Վահան յաղթող քաջդ 'ի քաջաց
  Եւ նահատակդ առաքինեաց։
Յարեւելից Հայոց ազգաց
  Լոյս ծագեցար Միջագետաց,
  Եկեալ հասեր յարըն Մասեաց
  Որ 'ի գաւառըն Բըզնունեաց։
ՅԵրաշխաւոր յուխտըն վանաց
  Աղօթական մըշտականաց.
  Անտի ապա իջեր 'ի վայր
  Ի Դամասկոս ոչ վայրապար.
Վըկայելով ում ցանկացար
  Տեառն Յիսուսի հաւատացար.
  Զնա աղաչեա 'նդ մեր անդադար
  Պահել ըզմեզ անպատահար։

# ՇԱՐԱԿԱՆ

# ՎԱՀԱՆԱՅ ԳՈՂԹՆԱՑԻՈՅՆ

Զարմանալի է ինձ քան զերգս երաժշտականաց ձայնս՝ ողբոց քոց հնչմունք . ով երանելի տէր Վահան՝ ընտրեալ յԱստուծոյ ։

Նաւեալ յորէորէ այս զհոգւոյս մտաւնս . յորժնել քեզ երգս ոչ զղջականս , այլ հոգեւորս և ուրախարարս , յորդորականս և ներբողեանս . ով երանելի տէր Վահան , ծառայ Քրիստոսի ։

Զարհուրեցուցանէ քո Ճգնութիւնդ զմարմնոյս բնութիւնն . իսկ դու տուել զսար , ով երանելի տէր Վահան , սիրող Քրիստոսի ։

Արտաքնոցն զգաստքն , սանձիչ բանք սնոտեացն ՚ի պատրութիւն , իսկ քոյդ , սիրայնոյ տառածարեալ և ոգեշահ . ով երանելի տէր Վահան ընտրեալ յազգաց ։

Որպէս զքաջ նաւահանգիստ պատրաստեալ ՚ի պատերազմ՛, կատարեցեր զընթացս քո արիաբար յաղթացըն հարսանւոյնոյ զատարուեալ ընդ անմարմնականս . ով երանելի տէր Վահան , Գողթնեացն իշխեցող ։

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1 · Յօր · պակասէր անուննն խոսրո֊վու · որ սուրբ ասի , իբրու նա֊հատակեալ ընդ այլոց իշխանաց՝ 'ի կաշմայ :

2 · Իմա զմարցն ողբս առեալ:

3 · Տես յէջ 49 Բ հատորոյ Սոփե֊րացս :

4 · Այսպէս յօր :

5 · Այսպէս յօր · որ Թուի արա֊բացի ձայնդ Իփէյան , այսինքն է Պարտք · որպէս Թէ զհարկ տար֊ւոյն շնորհէր նոցա :

6 · Այն ինքն է խրամ:

7 · Բառք ինչ Թուին վրիպեալ յօ֊րինակէն :

8 · Փոխանակ ասելոյ փայէն փանէլ:

9 · Ոչ գիտեմ ուղիղ իցէ բառդ , Թէ արժան իցէ ընԹեռնուլ փըրէ֊րաշարծ :

10 · Յօր · լա վէրաչանն :

11 · Այսպէս յօր :

12 . Միւս վարք սրբոյս՝ Սովլի վանս կոչէ զուխտս զայս . իսկ Յայսմաւուրք՝ Յոհաննու վանս՝ յոտն Արագածու :

13 . Առաքեալն Պաւղոս :

14 . Այն ինքն է Ռաքքա քաղաք, որ զառաջինն կոչէր Նիկեփորիոն և ապա Կալլինիկոս և յետոյ Լէոնտուպօլիս :

15 . Ռուծափն ըստ հնոց որ և Րուսափոն . է այժմու Ռուզաֆա քաղաք , զորմէ Յայսմաւուրք ասեն .
« Մերձ 'ի սահմանս Դամասկոսի
» է . և է Ռուծափի քաղաքն 'ի
» մէջ Հալպայ և Համայ , 'ի վե-
» րայ ջրոյն որ գայ 'ի Համայ , և
» է աւերակ և անմարդաբնակ . և
» յայն ժամանակն անդ էր իշ-
» խանութիւն Շամայ իշխանին
» Տաճկաց » : Սակայն ոչ ընդ մէջ Հալպայ և Համայ , այլ հեռագոյն 'ի հիւսիսոյ արեւելից նոցա կայ քաղաքս 'ի հարաւոյ Եփրատ գետոյ . կոչէր 'ի հնումն և Սերգիուպօլիս կամ Սարգսուպօլիս , յանուն Ս . Սարգսի նահատակակցին Բաքոսի :

16. Սա լինքն է Հեշմ կամ Շամ-
հեշմ ամիրապետ կամ խալի-
փայ. որպէս ասի 'ի հին Յայս-
մաւուրս Կիրակոսի Արեւելցոյ,
“ Իշխանացաւ Շամայ՝ որ է
” Հեշմ ”։

17. Այսպէս գրի -նշն, և ոչ անձն։

18. Գուցէ զՀամա քաղաքն իմա-
նայ։

19. Յօր. ՂՅԷՂ ԷՂԷՆ. մարթ է եւս
ՂԷ ՅԷՂ ԷՂԷՆ։

20. Այսպէս յօր։

21. Այսինքն է Ծաղկազարդին օր։

22. Գուցէ Նժուգընթաց, որպէս
թէ երագընթաց։

23. Այս է Պաղպէք կամ Արեգ-
քաղաք, 'ի հարաւոյ կողմանէ
Համայ, որոյ զարմանալի աւե-
րակք։

24. Յօր. Աֆրահամ, որ գրչին
վրիպակ է։

25. Յայտ ուրեմն է զի գրիչ վա-
րուցս ընկեր Աբրահամու է ա-
ռաջնորդին Երաշխաւոր վանաց
Արծկէոյ, որ և նախ աստնջակա-
նեալ էր զսուրբն. կամ թէ նոյն

ինքն Աբրահամ՝ որ և Արտա-
ւազդ ։ Աւա՛ղ զի չկայր յօրինա-
կիս անուն նորա , զի ընդ քաջա-
գոյնս 'ի գրչաց ազգիս դրոշմեալք,
և Թերեւս առաջին և անզուգա-
կան 'ի Ճառս հայրենի կրից և ի-
մաստից . որոյ բանք՝ ոչ գիտեմ
խուռն ակամբք և ոսկեօք ար-
դեւք քանդակեալք , եթէ գոն-
դագունդ արեամբք և արտա-
սուօք ։

26 . Այսպէս յօր ։

27 . Միւսն որպէս ասաւ ( յէջ 50)
մարերի գնէ . իսկ Յայսմաւուրք
յարեգ ամսոյ 20 և 'ի մարտ 28
կարգեն զյիշատակ սորայ , որ
է ըստ անշարժ տօմարի . որում
զուգի և 17ն մարտի ըստ հնոյն,
զոր գնէ ընագիրն ։

28 . Ծայրատառք վայելուչ և հնա-
ձեւ առաջին յօդեն զանուն յօ-
րինողին Յովհաննէի . այլ Թէ որ
Յովհան , ոչ ունիմք ասել ։

